«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԳՅՈՒՄՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

«Գյումրու պետական տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Քոլեջ, ՄՈՒՀ կամ ԳՊՏՔ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է **ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2
ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ . 6
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 13
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 16
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 19
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 23
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 27
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 30
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 34
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 36
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 40
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 43
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 45
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ 49
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 50
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 52
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 54
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 55
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 55
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 56

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը.

ՄՈՒՀ-ը հիմնադրվել է 1932թ.՝ որպես «Գյումրու պետական տեխնիկական քոլեջ» և մինչ օրս հանդիսանում է երկաթուղու մասնգետների միակ դարբնոցը հանրապետությունում: Ուսումնական հաստատությունն այս տարիների ընթացքում մի քանի անգամ անվանափոխվել է: 2003թ. հունվար ամսից հանդիսանում է «Գյումրու երկաթուղու քոլեջ» ՓԲԸ-ի (ստեղծված 1932թ.) և «Գյումրու Ս.Սաֆարյանի անվան շինարարական քոլեջ»-ի (ստեղծված 1968 թ.) իրավահաջորդը: Քոլեջը 2003թ. հունվար ամսից հանդիսանում է «Գյումրու երկաթուղու քոլեջ» ՓԲԸ-ի (ստեղծված 1932թ.) և «Գյումրու Ս.Սաֆարյանի անվան շինարարական քոլեջ»-ի (ստեղծված 1968 թ.) իրավահաջորդը:

Քոլեջի գրանցման հասցեն ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տիգրան Մեծ 29:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Համաձայն «ՀՀ Շիրակի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության»՝ տարածքային զարգացումը կկենտրոնանա երեք կարևոր գերակայությունների վրա, դրանք են՝ տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացում, գյուղատնտեսական տեխնոլոգիաների արդիականացում և գյուղական տարածքների զարգացում, փոքր և միջին արդյունաբերական կազմակերպությունների գործունեության խրախուսում և աջակցություն, զբոսաշրջության զարգացում: 2017-2025 թվականների համար ՀՀ Շիրակի մարզի տեսլականն է՝ լինել Հայաստանի Հանրապետության առաջատար մարզ, ապահովելով համայնքներում կայուն սոցիալ-տնտեսական հնարավորություններ, ունենալ մրցունակ տնտեսություն և զբաղվածության բարձր մակարդակ:

ՄՈՒՀ-ում միջին մասնագիտական կրթություն է իրականացվում թվով 7 մասնագիտություններով առկա և հեռակա ուսուցմամբ.

1. «Հաշվապահական հաշվառում», որակավորումը՝ Հաշվապահ.
2. «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում», որակավորումը՝ Տեխնիկ՝ հաշվողական տեխնիկայի և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկման.
3. «Փոխադրումների կազմակերպում և կառավարում երկաթուղային տրանսպորտում», որակավորումը՝ Տեխնիկ-կարգավար՝ տրանսպորտում փոխադրումների կազմակերպման և կառավարման.
4. «Ավտոմատիկան, հեռամեխանիկան և կապը երկաթուղային տրանսպորտում», որակավորումը՝ Տեխնիկ՝ տրանսպորտային միջոցների հեռամեխանիկայի, կապի և ավտոմատ համակարգերի շահագործման և տեխնիկական սպասարկման.
5. «Երկաթուղու էլեկտրաքարշի տեխնիկական շահագործում», որակավորումը՝ Էլեկտրատեխնիկ՝ երկաթուղու էլեկտրաքարշի շահագործման և տեխնիկական սպասարկման.
6. «Երկաթուղու շարժակազմի տեխնիկական շահագործում», որակավորումը՝ Տեխնիկ՝ վագոնների տեխնիկական շահագործման.

7. «Երկաթուղիների շինարարություն, երկաթգծի և գծային տնտեսության սպասարկում», որակավորումը՝ Տեխնիկ՝ երկաթգծի և գծային տնտեսության սպասարկման:

Քոլեջն ունի 39 դասավանդող, որից 17-ը հիմնական, 13-ը՝ համատեղությամբ, ևս 9 դասավանդող: Դասախոսական անձնակազմից 11-ը պրակտիկ ոլորտի մասնագետներ են, որոնք հիմնականում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԻ-ի աշխատակիցներն են: ՄՈՒՀ-ում 2024թ. դեկտեմբերի դրությամբ կրթություն է ստանում 315 ուսանող, որից 148-ը՝ առկա, իսկ 167-ը՝ հեռակա համակարգում: ՄՈՒՀ-ում գործում է վարձավճարների հետևյալ քաղաքականությունը.

- առկա համակարգում սովորողների համար այն կազմում է 90,000 դրամ,
- հեռակա համակարգում սովորող և Հարավկովկասյան երկաթուղու աշխատակիցների համար՝ 75,000 դրամ,
- օտարերկրյա քաղաքացիների համար՝ 120,000 դրամ:

Շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ըստ 2021-2022 ուստարվա տվյալների՝ 164 շրջանավարտներից 26%-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, 13%-ը զորակոչվել է բանակ, 40%-ը աշխատում են, որոնցից 25%-ը՝ իրենց մասնագիտությամբ: Իսկ ըստ 2022-2023 ուստարվա տվյալների՝ 91 շրջանավարտներից 5%-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, 73%-ը աշխատում են, որոնցից 70%-ը՝ իրենց մասնագիտությամբ: Զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն դիրքերում են գտնվում «Փոխադրումների կազմակերպում և կառավարում երկաթուղային տրանսպորտում» և «Ավտոմատիկան, հեռուստամեխանիկան և կապը երկաթուղային տրանսպորտում» մասնագիտությունները:

Աղբյուրների հղումներ. *քոլեջի գործունեության համատեքստի նկարագրման համար աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը, օր.՝*

- *ինքնավերլուծություն,*
- *ռազմավարական ծրագիր, ժամանակացույց,*
- *ստորաբաժանումների պլաններ, ընթացակարգեր և այլն,*
- *փորձագիտական այցի հանդիպումները,*
- *մարզի զարգացման ծրագիրը,*
- *այլ հայեցակարգային փաստաթղթեր:*

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

«Գյումրու պետական տեխնիկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում գործող տեխնիկական քոլեջը հանրապետությունում միակ միջին մասնագիտական հաստատությունն է, որը կրթական ծրագրեր է իրականացնում հիմնականում երկաթուղային մասնագիտություններով և ունի տարիների ընթացքում ձևավորված մասնագիտական ավանդույթներ: Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը նաև հաշվի է առել, որ Քոլեջն ինստիտուցիոնալ հավատարմագրում է անցնում առաջին անգամ, ինչպես նաև գտնվում է որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում:

Փորձագիտական խումբը նկատում է, որ քոլեջի ընթացիկ գործունեությունը համակարգված է իրականացվում: Ըստ էության, Քոլեջի կառավարումն իրավիճակային է, սակայն ղեկավար կազմի բարձր մասնագիտական որակավորումը և փորձառությունը կրթության կազմակերպման հարցում հնարավորություն են տալիս արդյունավետ իրականացնելու կառավարչական և կրթական գործընթացները: Փորձագիտական խումբը գտնում է, որ կառավարման գործընթացներն ինստիտուցիոնալ մակարդակի բերելու համար անհրաժեշտ է մշակել և ներդնել վերջնարդյունքահենք նպատակներ և դրանց արդյունավետության գնահատման չափելի որակական և քանակական ցուցանիշներ:

Գյումրու պետական տեխնիկական քոլեջի կառավարման և որակի ապահովման համակարգերի վերլուծությունը ցույց են տալիս, որ թեև քայլեր են ձեռնարկվել որակի ապահովման մշակույթի և մեխանիզմների ներդրման ուղղությամբ, դրանք դեռևս լիարժեք չեն: Որակի ապահովման համակարգը դեռևս ներդրման փուլում է և չի նպաստում տվյալահենք որոշումների կայացմանը: Չեն իրականացվել հաստատության գործունեության վրա ազդող գործոնների համակողմանի ուսումնասիրություններ և որոշումների հիմքում չկան հաստատության կողմից հավաքագրված, վերլուծված հավաստի տվյալներ: Քոլեջում որակի ապահովման համակարգի կայացումը կարևոր է տվյալների վրա հիմնված կառավարման մշակույթի զարգացման համար: Փորձագիտական խումբը նշում է, որ տվյալների վրա հիմնված վերլուծական մեխանիզմների ներդրումը և ռազմավարական պլանավորումն ու որակի ապահովման գործընթացի փոխկապակցումը կնպաստեն Քոլեջի կայուն զարգացմանն ու որակի մշակույթի ձևավորմանը:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում այն փաստը, որ նշանակալի է գործընկեր կազմակերպությունների ներգրավվածությունը կրթական ծրագրերի իրականացման հարցում, մասնավորապես՝ համագործակցությունը հիմնական գործընկեր՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հետ, ինչը հնարավորություն է տալիս Քոլեջին անմիջականորեն կապ ունենալ ոլորտի միակ խոշոր գործատու կազմակերպության հետ: Արտաքին շահակիցների հետ

սերտ կապերը թույլ են տալիս կայացնել կառավարչական այնպիսի որոշումներ, որոնք նպաստում են կրթական ծրագրերի բարելավմանը և որակավորումների արժանահավատ շնորհմանը:

Քոլեջում ներդրված կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչները մեծամասամբ մշակվել են հենց այս ուսումնական հաստատության համար՝ անմիջականորեն գործատուների ներգրավմամբ, ինչը նպաստել է ծրագրերի բովանդակության համապատասխանեցմանը աշխատաշուկայի պահանջներին: Միաժամանակ, ուսումնական գործընթացում ներգրավված դասախոսական կազմի զգալի մասն անմիջապես գործատու կազմակերպության պրակտիկ մասնագետներն են, որի արդյունքում ուսանողները ձեռք են բերում մասնագիտական անհրաժեշտ հմտություններ և գործնական կարողություններ: Դրական է նաև այն, որ ուսանողների մասնագիտական հմտությունների ձևավորման գործընթացում լայնորեն կիրառվում են գործատուի ռեսուրսները, մասնավորապես՝ տեխնոլոգիական և նախաավարտական պրակտիկաների իրականացման իրականացման ընթացքում:

Քոլեջի դասախոսները, կիրառելով դասավանդման և ուսումնառության ավանդական և նորարար մասնագիտական մեթոդներ, կարողանում են ապահովել շրջանավարտների համար համապատասխան գիտելիքների ու հմտությունների այնպիսի վերջնարդյունքներ, որոնք գործատուների համար հիմնականում ընդունելի են: Ուսանողին տրվող առաջադրանքները նպաստում են գործնական հմտությունների ձևավորմանը և կատարելագործմանը, միևնույն ժամանակ՝ կարևորվում է մասնագիտական տեսական գիտելիքների իմացությունը, ինչի արդյունքում Քոլեջը կարողանում է թողարկել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետներ:

Քոլեջում դասավանդում են բարձր որակավորում և մանկավարժական փորձառություն ունեցող դասախոսներ, երիտասարդ դասավանդողներ: Դասախոսական կազմը համալրված է նաև ոլորտի գործող մասնագետներով, գործատուներով, որոնց միջոցով Քոլեջն ապահովում է մասնագիտական գործնական առաջադրանքների կատարումը, ծանոթացումն անմիջականորեն աշխատանքային միջավայրին: Գործատու դասավանդողների առկայությունը նպաստում է ուսանողների պրակտիկ հմտությունների ձևավորմանը՝ մասնագիտական ոլորտի պահանջներին համապատասխան: Փորձագիտական խումբը նշում է, որ ելնելով դիտարկված կրթական ծրագրերի առանձնահատկություններից և ոլորտի զարգացման տեսլականից՝ գնահատելի է գործատու-դասավանդողների կողմից իրենց մասնագիտական հմտություններն ու փորձը Քոլեջի ուսանողներին փոխանցելու հատուկ հետաքրքրվածությունը: Փորձագիտական խմբի գնահատմամբ՝ Քոլեջին անհրաժեշտ է ներդնել դասախոսական կազմի կարիքների գնահատման և մասնագիտական, մանկավարժական, այլ անհրաժեշտ կարողությունների զարգացմանը նպաստող, ինչպես նաև դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմներ: Դասախոսների գնահատման արդյունքների հիման վրա մասնագիտական զարգացման միջոցառումների պլանավորումը կնպաստի դասախոսական կազմի կարողությունների զարգացմանը և դասավանդման արդյունավետության բարձրացմանը:

Քոլեջի կրթական ծրագրերի իրականացումը պահանջում է դրանց առանձնահատկություններին համապատասխանող միջավայր և ենթակառուցվածքներ:

Կրթական ծրագրերն իրականացնելու համար Քոլեջն ունի լաբորատորիաներ, մասնագիտական լսարաններ, այլ անհրաժշետ ենթակառուցվածքներ, համապատասխան նյութատեխնիկական բազա և ռեսուրսներ, որոնք ունեն բարելավման շարունակական անհրաժեշտություն: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ գործնական պարապմունքների, պրակտիկաների շրջանակում ուսանողները հնարավորություն են ունենում օգտվել գործընկեր կազմակերպությունների ռեսուրսներից:

Քոլեջում գործում են ուսանողների հավաքագրման մեխանիզմներ: Պոտենցիալ դիմորդների հետ կազմակերպվող միջոցառումները որոշ չափով նպաստում են հավաքագրման աշխատանքներին: Այդուհանդերձ, Քոլեջն ունի ուսանողական փոքրաթիվ համակազմ, ինչն անդրադառնում է կազմակերպության բյուջեի ձևավորման վրա: Առկա սահմանափակ ֆինանսական ռեսուրսներով Քոլեջը կարողանում է ապահովել կրթական ծրագրերի կատարումը, սակայն խնդրահարույց է զարգացմանն ուղղված ռեսուրսների բացակայությունը: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է ֆինանսական միջոցների բազմազանեցմանն ուղղված գործընթացների իրականացման անհրաժեշտությունը, ինչը կերաշխավորի կրթական ծրագրերի շարունակական իրականացումը: Միևնույն ժամանակ, չունենալով ֆինանսական մեծ հնարավորություններ՝ Քոլեջը կարողանում է ուսումնական գործընթացում արդյունավետորեն կիրառել գործընկեր կազմակերպությունների ռեսուրսներն ու ենթակառուցվածքները՝ ճկուն որոշումների և համագործակցության շնորհիվ:

Քոլեջը չունի հետազոտության ոլորտում սահմանված ուղղություն կամ առաջնահերթություն, թեև միջին մասնագիտական կրթության մակարդակում հետազոտությունների իրականացումը կարող է անմիջականորեն առնչվել մասնագիտական գործնական ոլորտի զարգացման և գործունեության իրականացման հետ: Փորձագիտական խումբը գտնում է, որ կրթական ծրագրերի լիարժեք ու արդյունավետ իրականավման համար անհրաժեշտ է սահմանել իրականացվող կրթական ծրագրերի հնարավոր հետազոտական ուղղությունները, պլանավորել դրանց իրականացմանն ուղղված քայլերը, կարևորել հետազոտության բաղադրիչը ոչ միայն ուսամնառողների շրջանում, այլև ստեղծել նպաստավոր պայմաններ դասախոսական կազմի համար՝ հետազոտական նախագծերում ընդգրկելու նպատակով:

Քոլեջի արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտում առկա են զարգացման հնարավորություններ: Քոլեջը կարևորում է միջազգային կապերի ստեղծումը՝ գործնական և հետազոտական գործունեությունը բազմազանեցնելու համար, սակայն արտաքին կապերի կառավարման արդյունավետության բարձրացման խնդիր ունի: Փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջի արտաքին կապերը և միջազգային համագործակցությունը սահմանափակ են: Մինչդեռ Քոլեջն ունի հնարավորություն ընդլայնելու համագործակցության աշխարհագրությունը, մասնավորապես՝ կարող է կապեր հաստատել ռուսական համանման կրթական հաստատությունների հետ, ինչը կնպաստի Քոլեջի հեղինակության բարձրացմանը, ուսանողների և դասախոսների մասնագիտական անընդհատ աճին և միջազգային կրթական համայնքում ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:

Քոլեջը կարիք ունի հստակեցնելու իրականացվող գործընթացների հաշվետվողականության և թափանցիկության ապահովման մեխանիզմները: Ներկայումս դրանք շահակիցներին չեն տալիս ամբողջական պատկերացում Քոլեջի գործունեության արդյունավետության մասին, չեն նպաստում հասարակության շրջանում ուսումնական հաստատության ճանաչմանը և վարկանիշի բարձրացմանը: Յուրաքանչյուր հաստատության պաշտոնական ներկայացվածությունը համացանցում կարևոր պայման է, ինչը հնարավորություն է ստեղծում ոչ միայն ներկայանալի դարձնել հաստատությունը և տեղեկատվություն տրամադրել շահակիցներին, հասանելի դառնալ միջազգային գործընկերների համար, ստեղծել և պահպանել արտաքին կապեր, այլև ապահովել պատշաճ հաշվետվողականություն և թափանցիկություն: Փորձագիտական խումբը շեշտադրում է Քոլեջի պաշտոնական կայքէջի ստեղծման անհրաժեշտությունը, ինչը հանրությանը լիարժեք ներկայանալու հնարավորություն կտա, կապահովի արտաքին և ներքին շահակիցների հետ հետադարձ կապը, կնպաստի հասարակության շրջանում ուսումնական հաստատության մասին իրազեկվածության և պետության ու հասարակության կողմից շրջանավարտների նկատմամբ վստահության բարձրացմանը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Քոլեջի կառավարման մարմիններում ակտիվորեն ներգրավված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցները, ինչը հնարավորություն է տալիս մասնագիտական և կառավարչական գործընթացներում հաշվի առնել բոլոր շահակիցների կարծիքը:
2. Քոլեջի ղեկավար կազմի մասնագիտական երկարատև փորձը և ոլորտի խնդիրներին տեղեկացվածությունը, ինչը նպաստում է ոլորտի պահանջներին համապատասխան որոշումների կայացմանը:
3. Քոլեջի բոլոր կրթական ծրագրերում ներգրավված ոլորտի փորձառու մասնագետները, ինչը նպաստում է ուսանողների գործնական հմտությունների արդյունավետ ձևավորմանը:
4. Քոլեջի կրթական ծրագրերի մեծ մասի մշակումը անմիջականորեն գործատուի մասնակցությամբ («Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ)՝ նպաստելով աշխատաշուկայի պահանջներին և մասնագիտական կարիքների համապատասխանությունը:
5. Շրջանավարտների մասնագիտական զբաղվածության միջինից բարձր ցուցանիշները:
6. Քոլեջի դասախոսական կազմի մասնագիտական բարձր որակավորումը:
7. Քոլեջի ունեցած բավարար նյութատեխնիկական բազան, այդ թվում՝ մասնագիտացված լսարանները, ուսումնափորձնական հրապարակները և լաբորատորիաները, ինչպես նաև ակտիվորեն կիրառվող գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները:
8. Գործընկեր կազմակերպությունների ներգրավվածությունը կրթական ծրագրերում:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Ռազմավարական նպատակների իրականացման արդյունավետությունը գնահատելու համար հստակ սահմանված և չափելի ցուցանիշների բացակայություն:
2. Ստորաբաժանումների (այդ թվում ամբիոնների) միջև համագործակցության ոչ բավարար մակարդակը:
3. Որակի ապահովման համակարգի ոչ ամբողջական ընկալումը շահակիցների շրջանում, ինչպես նաև համակարգի ոչ լիարժեք ներդրումը:
4. Վերջին տարիներին ոլորտային մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ համագործակցության և փորձի փոխանակման, կրթական ծրագրերի համեմատական վերլուծության բացակայությունը:
5. Դասախոսական կազմի կատարելագործման կամ վերապատրաստման պլանավորման բացակայությունը:
6. Դասախոսների և ուսանողների հետազոտական գործունեությանը նպաստող մեխանիզմների և խրախուսման միջոցների բացակայությունը:
7. Միջազգային ծրագրերում և նախագծերի շրջանակներում համագործակցության փորձառության պակասը:
8. Հաշվետվողականության թափանցիկության ապահովման սահմանափակ հնարավորությունը:

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1. Հստակեցնել և ամրագրել Քոլեջի առաքելությունը՝ շեշտադրելով նաև ՄՈՒՀ-ի երկաթուղային և տեխնիկական մասնագիտական ուղղվածությունը:
2. Ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությամբ մշակել և ներդնել Քոլեջի ռազմավարական ծրագիր և դրա իրականացման պլան-ժամանակցույց՝ սահմանելով Քոլեջի ռազմավարական նպատակները, պատասխանատուները, ժամակետները, ակնկալվող վերջնարդյունքների գնահատման չափելի քանակական և որակական ցուցանիշները:
3. Քոլեջի ղեկավար կազմի և ստորաբաժանումների պլանավորումները և հաշվետվողականության գործընթացները համահնչեցնել հաստատության ռազմավարական առաջնահերթություններին՝ ապահովելով դրանց լիարժեք համապատասխանությունը երկարաժամկետ զարգացման նպատակներին: Հաշվետվությունների կառուցվածքում խթանել վերլուծական բաղադրիչի խորացումը՝ ապահովելով տվյալների հիմնավորվածությունը, ձեռք բերված արդյունքների համադրված գնահատումը:
4. Մշակել և ներդնել այլընտրանքային ֆինանսավորման մեխանիզմներ, այդ թվում՝ դրամաշնորհային ծրագրերի մասնակցություն, կարճաժամկետ վճարովի դասընթացներ՝ ապահովելու ֆինանսական հոսքերի դիվերսիֆիկացումը:

5. Դիտարկել ամբիոնների միավորման և խոշորացման հնարավորությունը, հատկապես՝ ոլորտային առումով միմյանց շատ մոտ ՄԿԾ-ների դեպքում՝ ապահովելով միջամբիոնային համագործակցությունը, ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը:
6. Իրականացնել Քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների խորքային և համակարգային ուսումնասիրություն՝ վերլուծելով կրթական ծրագրերի արդյունավետությունը, նոր կրթական ծրագրերի ներդրման հնարավորությունը:
7. Ապահովել որակի ապահովման համակարգի շարունակականության և կայունության ապահովումը, մասնավորապես՝ որակի ապահովման պատասխանատուի պարբերական վերապատրաստման և մասնագիտական կարողությունների զարգացման միջոցով:
8. Բազմազանեցնել և զարգացնել տվյալների հավաքագրման մեխանիզմները՝ նպաստելով առավել օբյեկտիվ և խորքային վերլուծությունների իրականացմանը:
9. Համագործակցել այլ ուսումնական հաստատությունների որակի ապահովման պատասխանատուների հետ՝ ուսումնասիրելով ոլորտի դրական փորձը:

Որակավորումների արժանահավատ շնորհում

1. Դիտարկել աշխատանքի վրա հիմնված ուսուցում իրականացնելու հնարավորությունը:
2. Ուսումնասիրել տեխնիկական այլ ոլորտներում աշխատաշուկայի պահանջները՝ ապահովելով նոր մասնագիտությունների ներդրման հնարավորությունները և մասնագիտական կրթության ծրագրերի բազմազանության զարգացումը:
3. Հանրակրթական առարկաների դասավանդումն իրականացնել մասնագիտական համատեքստում՝ բնական և ճշգրիտ գիտությունները կապակցելով մասնագիտական (այդ թվում՝ երկաթուղային) ոլորտի պրակտիկ օրինակների հետ: Ինչպես նաև արդիականացնել օտար լեզուների դասավանդման մեթոդները՝ կիրառելով առավել շատ դիդակտիկ և լսողական նյութեր, նորագույն տեխնոլոգիներ:
4. Մշակել և ներդնել լաբորատոր աշխատանքների, պրակտիկաների, ինչպես նաև ամփոփիչ գնահատման հստակ չափանիշներ՝ ապահովելով ուսանողների գիտելիքների և կարողությունների օբյեկտիվ գնահատումը:
5. Իրականացնել ՄԿԾ-ների համեմատական վերլուծություններ Ռուսաստանի Դաշնության համանման ուսումնական հաստատությունների հետ՝ ապահովելով կրթական ծրագրերի բովանդակության արդիականացում, մասնագիտական նորարարություններին և միջազգային լավագույն փորձին ուսանողների ու դասախոսների ծանոթացում, ինչպես նաև կրթական գործընթացում նոր մեթոդների և մոտեցումների ներդրում:
6. Ներդնել մենթորության համակարգ, որի շրջանակում հստակորեն կսահմանվեն սկսնակ դասախոսների և մենթորների պարտականություններն ու գործառույթները՝ ուշադրության կենտրոնում ունենալով դասավանդման մեթոդների շարունակական բարելավումը:

7. Դիտարկել գրադարանի թվայնացման հնարավորությունները՝ ապահովելով գրադարանային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարումը և օգտագործումը:
8. Շարունակել լաբորատորիաների և կրթական միջավայրի բարելավման աշխատանքները:

Երկարաժամկետ զարգացում

1. Ընդլայնել դիմորդների հավքագրման աշխարհագրությունը՝ այցեր իրականացնելով ոչ միայն Գյումրու, այլև հարակից համանքների ուսումնական հաստատություններ՝ նպաստելով դիմորդների հոսքի ավելացմանը:
2. Դիտարկել պաշտոնական առնվազն երկլեզու (հայերենը պարտադիր) կայքէջ ունենալու հնարավորությունը՝ ապահովելով ՄՈՒՀ-ում իրականցվող միջոցառումների և փաստաթղթերի լուսաբանումը:
3. Քայլեր իրականացնել մեծացնելու շահակիցների շրջանում Քոլեջի գործունեության և մասնագիտությունների հանրահռչակումը:
4. Դիտարկել կարճաժամկետ դասընթացների և վերապատրաստումների իրականացման հնարավորությունը՝ ապահովելով լրացուցիչ ֆինանսական մուտքեր:
5. Խթանել համագործակցությունը հասարակության լայն շերտերի հետ՝ ընդլայնելով քոլեջի կապերը՝ չսահմանափակվելով բացառապես երկաթուղային ոլորտով:
6. Սահմանել հետազոտության առաջնահերթություններ՝ հաշվի առնելով տեխնիկական քոլեջի մասնագիտությունների առանձնահատկությունները և ոլորտի գործատուների կարիքները:
7. Ներդնել հետազոտական գործընթացներում դասախոսական կազմի ներգրավման ու խրախուսման մեխանիզմներ:

Արմեն Հարությունյան
Փորձագիտական խմբի ղեկավար

29 ապրիլ 2025թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Գյումրու պետական տեխնիկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից[1].

1. **Արմեն Հարությունյան**- Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ Զարգացման գծով պրոռեկտոր, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Աննա Հայրապետյան**- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոս, ամբիոնի վարիչ, փորձագիտական խմբի անդամ,
3. **Էլինա Շամխալովա**- Եվրասիա միջազգային համալսարան, հավատարմագրման գործընթացների համակարգող, փորձագիտական խմբի անդամ,
4. **Ալբերտ Թադևոսյան**- Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի Ֆինանսներ բաժնի 2-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ, ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ Անահիտ Տերտերյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Գյումրու պետական տեխնիկական քոլեջը ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 1-ը փետրվարի 2024թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո Քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը փետրվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել (նշված է 2024թ. համար): Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ:

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Գյումրու պետական տեխնիկական քոլեջն ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 08-ը օգոստոսի 2024թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[2]:

Նախնական այց

Դեկտեմբերի 5-ին առցանց հանդիպում է տեղի ունեցել քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2024թ. դեկտեմբերի 9-11-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն[3], ռեսուրսերի դիտարկում[4] և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

---

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ։ Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 04-ը ապրիլի 2025թ.։Նախնական զեկույցի վերաբերյալ Քոլեջը դիտարկումներ չի ներկայացրել։ Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 29.04.2025թ.

_____

Անահիտ Տերտերյան
Փորձագիտական խմբի համակարգող

29-ը ապրիլ 2025թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: «Գյումրու պետական տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ը ՀՀ-ում լինելով միջին մասնագիտական կրթության ոլորտում երկաթուղային մասնագիտությունների ուղղությամբ մասնագիտացված միակ ուսումնական հաստատությունը կրթություն է կազմակերպում 7 կրթական ծրագրերով, որոնցից 5-ը երկաթուղային մասնագիտություններով, իսկ 2-ը՝ հարակից ոլորտներով՝(«Հաշվապահական հաշվառում», «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում»):

ՄՈՒՀ-ը չունի հստակ սահմանված առաքելություն ինչպես Կանոնադրությունում, այնպես էլ Զարգացման ծրագրում: Զարգացման ծրագրում որպես գերակա խնդիր ներկայացված դրույթը ինքնավերլուծության մեջ դիտարկվում է որպես առաքելություն, այն է՝ «սովորողների ստեղծագործական աշխատանքի խթանումը, վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացումը, աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունների ներդնումը և ժամանակի պահանջներին համապատասխան որակյալ կադրերի պատրաստումը»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցները քոլեջի առաքելությունը համարում են ՀՀ երկաթուղային համակարգի համար մասնագետներ պատրաստելը: Սա է վկայում նաև այն, որ նույնիսկ ոչ երկաթուղային մասնագիտությունները (օրինակ՝ Հաշվապահություն) առավելապես կենտրոնացված են այդ ոլորտի վրա, և այդ ծրագրերում ներգրավված պրակտիկ դասախոսները նույնպես Երկաթուղու մասնագետներն (հաշվապահ) են:

ՄՈՒՀ-ն առաջնորդվում է 2020-2025թթ. Զարգացման ծրագրով, որը ներկայացվել է Քոլեջի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի մասնակցի՝ ներկայիս տնօրենի կողմից: Տնօրենի ընտրությունից հետո փաստաթուղթը առանց որևէ փոփոխության դրվել է կիրառության մեջ: Փաստաթուղթը ներառում է հաստատության առկա վիճակի վերլուծությունը, ռազմավարական նպատակները և խնդիրները, ինչպես նաև դրանց իրականացման փուլերը: Ծրագրի առանցքային բաղադրիչներն են կրթության որակի բարձրացումը, կրթական գործընթացի արդիականացումն ու համակարգչայնացումը, կառավարման համակարգի կատարելագործումը, արտաքին կապերի ընդլայնումը և ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետության բարձրացումը: Անհրաժեշտ է նշել, որ զարգացման ծրագրում առկա չեն նպատակների ձեռքբերման արդյունավետության գնահատման որակական և քանակական ցուցանիշներ: ԶԾ-ի իրականացումը նախատեսված է երկու փուլով. առաջին փուլ՝ 2020-2022թթ., երկրորդ փուլ՝ 2023-2025թթ.:

Փորձագիտական խումբը նշում է, որ Զարգացման ծրագրի համար սահմանված չէ պլան-ժամանակացույց, որտեղ արտահայտված կլինեն նպատակների իրականացման քայլերը,

պատասխանատուները, ֆինանասական հատկացումները և այլն։ Չնայած նրան, որ ՌԾ-ն մոտենում է իր ավարտին, սակայն մինչ օրս առկա են որոշ սահմանված խնդիրներ, որոնք իրենց լուծումները չեն ստացել, օրինակ՝ լրացուցիչ ֆինանսավորման և դրա արդյունավետ օգտագործման մեխանիզմները, քոլեջի համագործակցությունը արտասահմանյան հաստատությունների հետ, Քոլեջը պաշտոնական կայքէջի ստեղծումը և այլն։ Քոլեջը նշված խնդիրների լուծում չստանալը մեծամասամբ հիմնավորում է ֆինանսական միջոցների սղությամբ։

Ըստ ինքնավերլուծության՝ Քոլեջի ներքին շահակիցներն են ուսանողները, դասախոսները, աշխատակիցները, արտաքին շահակիցներն են՝ ուսանողների ծնողները, շրջանավարտները, գործատուները: Փորձագիտական խումբը նկատում է, որ 2020-2025թթ. ԶԾ-ը մշակելիս շահակիցների կարիքների ինստիտուցիոնալ և խորքային վերհանում չի իրականացվել, քանի որ փաստաթուղթը մշակվել է որպես նախնական առաջարկ։ Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ քոլեջի տնօրենը տվյալ ուսումնական հաստատությունում աշխատանքի տարիների փորձ ունի, ընդ որում՝ տարբեր պաշտոններում է աշխատել, ուստի որպես տնօրենի թեկնածու ներկայացրած զարգացման ծրագիրը կազմելիս հիմնականում տեղյակ է եղել ներքին և արտաքին շահակիցների կարիքներից։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջի թե ներքին, և թե արտաքին շահակիցները ընդհանուր առմամբ կիսում են քոլեջի նպատակները:

Ինչ վերաբերում է զարգացման ծրագրի գնահատմանը, ապա հարկ է նշել, որ, չնայած վերջինիս իրականացման ժամկետն արդեն մոտենում է ավարտին, ծրագրի արդյունավետության և արդյունքների գնահատումն ու վերլուծությունը համակարգված կերպով չեն իրականացվել։ Քոլեջը դեռևս չի մշակել և չի կիրառում ռազմավարական զարգացման ծրագրի իրագործման գնահատման մեխանիզմներ, իսկ ներկայացված հաշվետվությունները չունեն հստակ և ուղղակի փոխկապակցվածություն զարգացման ծրագրով սահմանված նպատակների հետ։ Ուսումնական հաստատությունն իրականացնում է ներքին գնահատման գործընթացներ (2022-2023 թթ.), սակայն վերջիններս ևս անմիջականորեն չեն արտացոլում զարգացման ծրագրով նախատեսված արդյունքների և նպատակների իրագործելիությունը։

Դատողություններ: Գյումրու պետական տեխնիկական քոլեջը, ունենալով հստակ մասնագիտական ուղղվածություն, շուկայում առանձնանում է իր մասնագիտական յուրահատկությամբ և հստակ դերակատարությամբ, հատկապես Հայաստանի երկաթուղային համակարգի համար անհրաժեշտ մասնագետների պատրաստման գործընթացում: Փորձագիտական խումբը նշում է, որ ՄՈՒՀ-ը կարիք ունի պաշտոնական փաստաթղթում՝ զարգացման ծրագրում, հստակորեն սահմանելու իր առաքելությունը, որը կդառնա ուղղորդիչ հիմք հաստատության հետագա գործունեության համար: Խումբը նաև կարևորում է, որ առաքելության ձևակերպման ընթացքում հատուկ շեշտադրվի երկաթուղային և տեխնիկական մասնագիտական ուղղվածությունը՝ հաշվի առնելով դրա կարևորությունը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների տեսանկյունից:

Ինչ վերաբերում է ՄՈՒՀ-ի զարգացման ծրագրին, ապա անհրաժեշտ է նշել, որ վերջինիս ժամկետը մոտենում է ավարտին, և այս փուլում առաջնային է գնահատել ծրագրի կատարման աստիճանը, ինչպես նաև վերլուծել այն բոլոր խնդիրները, որոնք կյանքի չեն կոչվել։ Այս

համատեքստում փորձագիտական խումբն ընդգծում է, որ առավել հիմնարար և առաջանցիկ զարգացման ծրագիր ունենալու համար կարևոր է հիմնվել ներքին և արտաքին շահակիցների համակարգված և ինստիտուցիոնալ կարիքների բացահայտման վրա:

Բացի այդ, ՄՈՒՀ-ին անհրաժեշտ է մշակել և ներդնել հստակ և չափելի կատարողական ցուցանիշներ, որոնք անմիջականորեն փոխկապակցված կլինեն ռազմավարական նպատակների ու խնդիրների հետ: Նշված ցուցանիշները հնարավորություն կտան պարբերաբար չափել, վերլուծել և գնահատել զարգացման ծրագրի արդյունքները:

Զարգացման ծրագրի արդյունավետության ապահովման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի հաշվետվողականության համակարգված մոտեցման ձևավորումը: Մասնավորապես, ՄՈՒՀ-ի զարգացման ծրագրի իրագործման արդյունավետության բարձրացման նպատակով նպատակահարմար է համապատասխանեցնել ստորաբաժանումների և տնօրենի հաշվետվողականության ձևաչափերը Զարգացման ծրագրում սահմանված նպատակներին և ցուցանիշներին: Բացի այդ, հաշվի առնելով ՄՈՒՀ-ի կողմից ներքին գնահատումներ իրականացնելու դրական փորձըփ, կարևոր է, որ այդ գնահատումների բովանդակությունը ևս համադրվի Զարգացման ծրագրի նպատակներին՝ ապահովելով քոլեջի ձեռքբերումների առավել բարձր տեսանելիություն և չափելիություն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ «Գյումրու պետական տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ն ունի հստակ մասնագիտական ուղղվածություն և եզակի դերակատարում ՀՀ-ում՝ հանդիսանալով միջին մասնագիտական կրթության ոլորտում երկաթուղային մասնագիտություններով մասնագիտացված միակ ուսումնական հաստատությունը, Քոլեջի փաստացի իրականացվող առաքելությունն ապարտացոլում է շահակիցների կարիքները, ներքին և արտաքին շահակիցների համար ընկալելի են Քոլեջի նպատակները, դրանց հասնելու ուղիները, կարևորված են հաստատության դերն ու նշանակությունը մասնագիտական կրթության ոլորտում, ՄՈՒՀ-ն ունի ներքին գնահատումներ իրականացնելու դրական փորձառություն, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: Գյումրու պետական տեխնիկական քոլեջի կառավարումն իրականացնում է կոլեգիալ կառավարման մարմինը՝ Քոլեջի խորհուրդը, և գործադիր մարմինը՝ Քոլեջի տնօրենը:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ Քոլեջի Խորհուրդը և տնօրենը հաստատության զարգացման հիմնական ուղղությունը դիտարկում են երկաթուղային ոլորտը և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հետ համագործակցությունը:

Քոլեջի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են կառավարման խորհրդում, ներքին շահակիցներից դասախոսները՝ Տնօրինական, Մանկավարժական և Ուսումնամեթոդական խորհուրդներում, իսկ ուսանողները՝ Ուսանողական խորհուրդում: Անհրաժեշտ է նշել, որ թե՛ ներքին, և թե՛ արտաքին շահակիցները ակտիվ ներգրավված են կառավարման գործընթացների քննարկումներին և որոշումների կայացմանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջի ներքին շահակիցները բարձրացնում են հարցեր կապված տեխնիկական ուղղությամբ այլ ՄԿԾ-ների ներդրման, առկա ՄԿԾ-ների ակտիվացման, (հատկապես՝ Հաշվողական տեխնիկայի և համակարգչային ցանցի տեխնիկական սպասարկում և Հաշվապահական հաշվառում ՄԿԾ-ների տարածման և զարգացման) ուղղությամբ:

Ուսումնական գործընթացները կառավարվում են ՄՈՒՀ-ի տնօրենի երկու տեղակալների՝ ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով: Համաձայն հաստատության կազմակերպական կառուցվածքի՝ ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը համակարգում է ամբիոնների, պրակտիկաների կազմակերպման և մեթոդական աշխատանքները, իսկ դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը՝ կուրսերի ղեկավարների, ֆիզիկական կուլտուրայի ղեկավարի (հաստիքը թափուր է), ուսանողական խորհրդի աշխատանքները: Ամբիոններն իրենց աշխատանքները կազմակերպում են համաձայն 2018 թվականին հաստատված «Ամբիոնների կանոնակարգի»: Իրականացնելով 7 կրթական ծրագրեր և, 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ունենալով 39 դասավանդող (վերջին 3 տարվա ընթացքում դա դասավանդողների առավելագույն թիվն է), ուսուցումը կազմակերպում է 8 ամբիոնի միջոցով. Հանրակրթական և սոցիալ-տնտեսագիտական, Բնագիտամաթեմատիկական, Ընդհանուր մասնագիտական ամբիոններ և 5 մասնագիտական ամբիոններ, որոնք կրում են իրականցվող կրթական ծրագրերի անվանումները: Յուրաքանչյուր ամբիոնում աշխատող դասախոսների միջին թիվը 5-ն է:

Քոլեջի կազմակերպական կառուցվածքում ներկայացված են ստորաբաժանումների միջև առկա հորիզոնական և ուղղահայաց կապերը: Փորձագիտական խմբի դիտարկումներն ու փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Քոլեջում կառավարումն իրականացվում է հստակ ուղղահայաց կառավարմամբ, իսկ հաշվետվողականությունն իրականացվում է ներքևից վերև՝ ըստ ենթակայության: Ստորաբաժանումների միջև կապերը զարգացած չեն, օրինակ, տեսանելի չէ միջամբիոնային համագործակցության արդյունավետությունը:

ՄՈՒՀ-ը բոլոր պաշտոնների համար մշակել և ներդրել է պաշտոնի անձնագրեր, որոնք սահմանում են բոլոր աշխատակիցների գործունեության և պատասխանատվության շրջանակը:

Ինչ վերաբերում է մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացին, ապա Քոլեջը կարևորել է ոլորտի գործատուների հետ համագործակցությունը և պրակտիկ մասնագետների ներգրավումը ուսումնական գործընթացում: Բոլոր միջին մասնագիտական կրթական ծրագրերում ներգրավված են պրակտիկ ոլորտի մասնագետներ: ՄՈՒՀ-ն ունի նաև անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ իր առջև տված ռազվարական խնդիրների լուծման համար:

Ֆինանսների բաշխումը Քոլեջն իրականացնում է տարեկան պլանավորմամբ՝ եկամուտների և ծախսերի նախահաշվի հիման վրա: Ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատակիցների աշխատավարձերը (2021թ. – 78.80%, 2022թ. - 82.30%, 2023թ. – 85.90%), տնտեսական ծախսերը (2021թ. – 6.80%, 2022թ. - 6.70%, 2023թ. – 5.00%), ինչպես նաև կրթաթոշակների վճարումը (2021թ.՝ 7.50%, 2022թ.՝ 5.90%, 2023թ.՝ 6.40): Բյուջետային մուտքերը կազմում են. 2021թ.՝ 74.30%, 2022թ.՝ 77.10%, 2023թ.՝ 80.10%: Արտաբյուջեն ձևավորվում է վճարովի համակարգում սովորող ուսանողների վարձավճարներից (միայն 2021թ. նաև վճարովի կարճաժամկետ դասընթացներից): Անհրաժեշտ է նաև նշել, որ Քոլեջը ընթացիկ շենքային պայմանների բարելավման, վերանորոգումների, առկա լաբորատորիաների պահպանման և ռեսուրսային համալրման նպատակով ներգրավում է նաև գործատու-գործընկերներին, մասնավորապես՝ համագործակցում է ոլորտի հիմնական գործատու հանդիսացող «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հետ:

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ընթացիկ և տարեկան պլանավորումներով, իսկ որպես ստորաբաժանումների աշխատանքների վերահսկողության և մշտադիտարկման մեխանիզմ դիտարկվում են հաշվետվությունները: Ստորաբաժանումների աշխատանքային պլանները կազմվում են կարճաժամկետ՝ տարեկան պլանավորմամբ: Քոլեջի ստորաբաժանումները պլանավորում են կիսամյակի կամ մեկ ուսումնական տարվա համար նախատեսվող աշխատանքները, որոնք ուղղակիորեն չեն ընդգծում գործող ԶԾ-ի հիմնախնդիրները:

Պլանավորման փաստաթղթերի և հաշվետվությունների դիտարկումը ցույց տվեց, որ Քոլեջը փորձել է ստորաբաժանումների հաշվետվությունները դարձնել առավել վերլուծական: Անհարժեշտ է փաստել, որ որոշ ստորաբաժանումներում այն հաջողվել է, օրինակ՝ ՈԱ բաժնի հաշվետվությունները, որոշները դեռևս առավել նկարագրողական են: Հաշվետվությունների հիման վրա 2022-2023 և 2023-2024 ուսումնական տարվա արդյունքներով Քոլեջը կազմել է իր գործունեության ներքին գնահատման հաշվետվությունները, որոնք քանակական տեղեկություններ են պարունակում տարբեր չափանիշներով (օրինակ, ուսանողների թիվը, շարժի, առաջադիմության ցուցանիշները, տվյալներ շրջանավարտների և դասախոսական կազմի թվի վերաբերյալ, գույքի և այլ ռեսուրսների, գրադարանի և տարբեր միջոցառումների մասին, բյուջետային միջոցների վերաբերյալ և այլն)՝ ընթացիկ և նախորդ երկու ուսումնական տարիների կտրվածքով: Ներկայացված տվյալների հիման վրա իրականացվել է նաև SWOT վերլուծություն:

Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների համակողմանի ուսումնասիրություններ չեն իրականացվել: Ներկայումս քոլեջի վրա ազդող առաջնային արտաքին գործոնները հիմնականում պայմանավորված են Հարավկովկասյան երկաթուղի ՓԲԸ-ի գործունեությամբ, որի աշխատանքների պասիվացումը վերջին տարում հանգեցրել է քոլեջի

ուսանողների թվաքանակի նվազմանը, ինչպես նաև կարճաժամկետ ծրագրերի դադարեցմանը: Նշենք, որ այս ռիսկի վերաբերյալ խորքային վերլուծություններ չեն իրականացվել. հարցը քննարկվել է միայն կառավարման խորհրդում, սակայն համապատասխան որոշումներ դեռևս չեն ընդունվել: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ 2024թ.-ից՝ որակի ապահովման պատասխանատուի հաստիքի ներդրմանը զուգահեռ, իրականացվել են որոշ հարցումներ ներքին և արտաքին շահակիցների հետ: Գործատուների հետ իրականցված հարցումներից պարզ է դարձել, որ վերջիններս հիմնականում բավարարված են շրջանավարտներից, միայն առաջարկել են ավելացնել արտադրական պրակտիկաների ժամքանակը, որը քոլեջի կողմից ընդունվել է:

Ինչ վերաբերում է ՊԻԳԲ շրջափուլի ներդրմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ կառավարման և վարչարարության գործընթացում քոլեջը հիմնականում գտնվում է գնահատման փուլում: Միևնույն ժամանակ, որոշ գործընթացներ գտնվում են նոր՝ երկրորդ շրջափուլի իրականացման փուլում: Օրինակ՝ հաշվետվությունների ձևաչափը մեկ անգամ արդեն գնահատվել է, և արձանագրվել է, որ դրանք հիմնականում նկարագրական բնույթ ունեն: Այս համատեքստում քոլեջը ձեռնարկել է քայլեր՝ վերլուծական տարրեր ներառելու ուղղությամբ:

Քոլեջն ունի ֆեյսբուքյան էջ, որտեղ հիմնականում լուսաբանվում են հաստատության առօրյա գործընթացները, սակայն, օրինակ, մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում չի իրականացվում, առկա չէ տեղեկատվություն շրջանավարտների հաջողութունների վերաբերյալ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ քոլեջի կառավարումն իրականացվում է ոլորտի մասնագետների կողմից, ովքեր անմիջականորեն տեղյակ են ոլորտի առանձնահատկություններին: Սա հնարավորություն է տալիս ապահովելու արդյունավետ հաղորդակցություն ոլորտի մասնագետների հետ և նրանց ներգրավել կրթական գործընթացների կազմակերպման, այդ թվում՝ դասավանդման գործընթացում:

Փորձագիտական խումբը գովելի է համարում այն հանգամանքը, որ քոլեջն անմիջական կապ ունի իր հիմնական գործատուի՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հետ: Այնուամենայնիվ, ընկերության աշխատանքների պասիվացումը անմիջական ազդեցություն է ունենում քոլեջի գործունեության վրա: Ռիսկերի կառավարման նպատակով քոլեջն անհրաժեշտություն ունի որոնելու այլընտրանքային լուծումներ, մասնավորապես՝ զարգացնելու համագործակցությունը նաև այլ միջին մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) գործատուների հետ: Այս նպատակով անհրաժեշտ կլինի ուսումնասիրել աշխատաշուկան և, անհրաժեշտության դեպքում, ներդնել տեխնիկական ուղղությամբ արդի այլ ՄԿԾ-ներ, գտնել նոր գործատուներ, ինչը կնպաստի երկաթուղուց քոլեջի ֆինանսական կախվածության մեղմացմանը:

Ինչ վերաբերում է քոլեջի կառուցվածքին, ապա փորձագիտական խումբը գտնում է, որ ամբիոնների որոշակի խոշորացման անհրաժեշտություն կա, հատկապես հաշվի առնելով, որ ՄԿԾ-ներն իրենց ոլորտային ուղղվածությամբ բավականին մոտ են: Այս մոտեցումը կնպաստի ոչ միայն կառավարման գործընթացի օպտիմալացմանը, այլ նաև ՄԿԾ-ների շրջանակում դասախոսների միջև համագործակցության ընդլայնմանը՝ խթանելով միջդիսցիպլինար աշխատանքն ու փորձի փոխանակումը:

Դրական է, որ քոլեջը մշակել է աշխատակիցների համար պաշտոնի անձնագրեր, որոնք նպաստում են իրականացվող գործընթացների համակարգայնությանը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս հստակ ձևակերպելու աշխատակիցների պարտականություններն ու պատասխանատվությունները, ինչը կարևոր է կառավարման արդյունավետության բարձրացման և գործառնությունների կանոնակարգման համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջը ռեսուրսների պահպանման և բարելավման գործընթացում ներգրավում է իր հիմնական գործատուին, ինչը նպաստում է կրթական միջավայրի որոշակի բարելավմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը ֆինանսական դիվերսիֆիկացման կարիք ունի: Այս համատեքստում կարևոր է, որ կրթական հաստատությունը նախաձեռնողական քայլեր ձեռնարկի միջազգային ծրագրերում ներգրավվելու ուղղությամբ՝ ապահովելով լրացուցիչ ֆինանսական հոսքեր և համագործակցության նոր հնարավորություններ:

Դրական է գնահատվում քոլեջի նախաձեռնողականությունը՝ հաշվետվությունները առավել վերլուծական դարձնելու և ներքին գնահատումներ իրականացնելու ուղղությամբ, ինչը թույլ է տալիս որոշակիորեն տեսանելի դարձնել ապագա բարելավումները: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ նպատակահարմար կլինի թե՛ հաշվետվությունները, թե՛ ներքին գնահատումը փոխկապակցել քոլեջի ռազմավարական նպատակներին: Այս մոտեցումը հնարավորություն կընձեռի ոչ միայն գնահատելու ընթացիկ առաջընթացը, այլ նաև արժևորելու ռազմավարական ձեռքբերումները՝ ապահովելով կառավարման առավել համակարգված և նպատակային մոտեցում:

Ինչ վերաբերում է ՊԻԳԲ շրջափուլի ներդրմանը, նկատելի է, որ այն որոշ գործընթացներում կիրառվում է, սակայն անհրաժեշտ է նշել, որ ՄՈՒՀ-ը կարիք ունի մշակելու տվյալների վերհանման դիվերսիֆիկացված մեխանիզմներ, որոնք թույլ կտան իրականացնելու խորքային վերլուծություններ և կայացնել որոշումներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջի ներքին և արտաքին շահակիցները հիմնականում ընդգրկված են որոշումների կայացման գործընթացներում, մասնակցում են իրենց առնչվող որոշումների կայացմանը, ուսումնական հաստատությունում իրականացվող գործընթացները կանոնակարգված են, Քոլեջի ղեկավար կազմը մասնագիտական համայնքում հարգանք է վայելում, կառավարման գործընթացը նպաստում է որակյալ և փորձառու դասախոսական կադրերի ներգրավմանը, գործատուների հետ սերտ համագործակցությանը, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է բավարար:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: Գյումրու պետական տեխնիկական քոլեջն ունի միջին մասնագիտական կրթության 8 լիցենզավորված կրթական ծրագիր, որոնցից ներկայումս իրականացնում է 7-ը: Դրանցից 5-ն անմիջականորեն պատկանում են երկաթուղային ոլորտին.

1. «Փոխադրումների կազմակերպում և կառավարում երկաթուղային տրանսպորտում» (առկա, հեռակա),
2. «Ավտոմատիկան, հեռամեխանիկան և կապը երկաթուղային տրանսպորտում» (առկա, հեռակա),
3. «Երկաթուղու էլեկտրաքարշի տեխնիկական շահագործում» (առկա, հեռակա),
4. «Երկաթուղու շարժակազմի տեխնիկական շահագործում» (հեռակա),
5. «Երկաթուղիների շինարարություն, երկաթգծի և գծային տնտեսության սպասարկում» (հեռակա):

Մյուս երկու ծրագրերն իրականացվում են հարակից ոլորտներում՝

1. «Հաշվապահական հաշվառում» (առկա),
2. «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» (առկա):

«Շենքերի և կառույցների շինարարություն և շահագործում» կրթական ծրագրով ներկայումս ընդունելություն չի իրականացվում, քանի որ դիմորդների շրջանում պահանջարկը բացակայում է:

Քոլեջը երկաթուղային ոլորտում ՀՀ-ում եզակի միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի դասախոսական անձնակազմի ներկայացուցիչները և հիմնական գործատուն (ՀԿԵ ՓԲԸ) մասնակցել են ինչպես ՊԿՉ-ների մշակման, այնպես էլ վերանայման գործընթացներին: Պայմանավորված նրանով, որ երկաթուղային մասնագիտությունների ՊԿՉ-ները մշակվել են բացառապես ԳՊՏՔ-ում ներդնելու նպատակով, այդ իսկ պատճառով վերջիններս նույնությամբ կիրառություն են գտնում քոլեջում՝ առանց զգալի փոփոխությունների:

ՄՈՒՀ-ում 2024թ-ի դրությամբ կրթություն է ստանում առկա բաժնում՝ 148 և հեռակա բաժնում՝ 167 ուսանող: Անհրաժեշտ է նշել, որ հեռակա համակարգում սովորողների զգալի մասը «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի պրակտիկ մասնագետներն են:

Ինչ վերաբերում է կիրառվող դասավանդման մեթոդներին, ապա դասալսումների արդյունքում պարզ դարձավ, որ մասնագիտական մոդուլների ուսուցումը կազմակերպվում է մասնագիտացված լսարաններում և լաբորատորիաներում, որոնք հագեցած են անհրաժեշտ սարքավորումներով, ստենդներով և մասնագիտական տեղեկատվական նյութերով:

Դիտարկված միջին մասնագիտական կրթական ծրագրերի («Ավտոմատիկան, հեռամեխանիկան և կապը երկաթուղային տրանսպորտում», «Երկաթուղու էլեկտրաքարշի տեխնիկական շահագործում», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում երկաթուղային տրանսպորտում»)

ուսանողներն ունեն հնարավորություն տեսական պարապմունքներին զուգահեռ իրականացնել մասնագիտական տեխնիկական բնույթի գործնական աշխատանքներ՝ ռելեների քանդում-հավաքում, էլեկտրական շղթաների կառուցում և այլ առաջադրանքներ: Բացի այդ, գործնական հմտությունների զարգացման նպատակով ուսանողներին տրվում են նաև իրավիճակային առաջադրանքներ, որոնք իրականացվում են քոլեջի տարածքում տեղակայված երկու մասնագիտատեխնիկական ուսումնափորձնական հրապարակներում (учебный полигон), մասնավորապես՝ ռելսերի անսարքությունների հայտնաբերում, կոնտակտային սյուների միջոցով հոսանքի սնուցման ապահովում և այլ գործողություններ:

Ուսուցման գործընթացում կիրառվում են մասնագիտական տեսանյութեր, որոնք հիմնականում հասանելի են ռուսերեն լեզվով: Հարկ է նշել, որ ուսումնական հաստատության ունեցած մասնագիտական գրականությունն ու տեղեկատվական նյութերը ևս գերազանցապես ռուսերենով են: Ռուսերենի իմացության առումով ուսանողների նախնական մակարդակը քոլեջ ընդունվելու պահին բավարար չէ, ուստի լեզվի ուսուցումն իրականացվում է շերտավորված մեթոդով: Մասնագիտական լեզվի հմտությունների զարգացման նպատակով դասախոսները մասնագիտական բառապաշարը ուսանողներին ներկայացնում են և պահանջում կիրառել ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն լեզուներով: Դասալսումների ընթացքում արձանագրվեց, որ ռուսաց լեզվի ուսուցման արդյունավետության բարձրացման համար քոլեջը կարիք ունի լրացուցիչ ժամանակակից դիդակտիկ նյութերի և նորարարական դասավանդման մեթոդների ներդրման: Բացի այդ, դասալսումների արդյունքում պարզ դարձավ, որ հանրակրթական առարկաները (մասնավորապես՝ երկրաչափությունը և ֆիզիկան) ոչ միշտ են դասավանդվում մասնագիտական համատեքստում, այն է՝ չեն ներկայացվում երկաթուղային ոլորտի օրինակների հիման վրա և ուսանողների ապագա մասնագիտական գործունեության կիրառական համատեքստում: Ինչ վերաբերում է ուսումնառության նյութերին, ապա դրանք դասախոսների կողմից թարգմանվում և տրամադրվում են ուսանողներին: Ընդհանուր առմամբ, կրթական ծրագրերի ընթացիկ բարելավումները տեղի են ունենում դասալսումների և գործատու դասախոսների հետ քննարկումների արդյունքում:

Քոլեջում գործում է «Ուսանողների ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման կարգը», որի համաձայն՝ ուսանողների գիտելիքների ստուգումն ու գնահատումը իրականացվում են մոդուլների գնահատման թերթիկների, տարբերակված ստուգարքների, կիսամյակային քննությունների և պետական ամփոփիչ ստուգման միջոցով՝ հաշվի առնելով նաև ուսանողների հաճախումները, ընթացիկ ակտիվությունն ու անհատական աշխատանքը: Գնահատման թերթիկները ներառում են ինչպես տեսական գիտելիքների, այնպես էլ գործնական կարողությունների ստուգման առաջադրանքներ: Հարկ է նաև ընդգծել, որ դասախոսական կազմի մեծ մասը պրակտիկ ոլորտի մասնագետներ են, ովքեր իրենց գործնական փորձն ու գիտելիքները ներդնում են ուսումնական առաջադրանքների մշակման գործընթացում:

Դիտարկվող մասնագիտությունների պրակտիկաները բաժանվում են երեք խմբի՝ ուսումնական, տեխնոլոգիական (արտադրական) և նախաավարտական: Ուսումնական պրակտիկան իրականացվում են Քոլեջի լաբորատորիաներում, իսկ մյուս երկուսը՝ Հարավկովկասյան երկաթուղի ՓԲԸ-ում, վերջիններիս ռեսուրսերի կիրառմամբ: Առկա են պրակտիկաների ծրագրեր: Ինչ վերաբերում է պրակտիկաների գնահատմանը, ապա տեխնոլոգիական (արտադրական) և

նախաավարտական պրակտիկաները գնահատվում են պրակտիկայի օրագրերի հիման վրա՝ բավարար, լավ, գերազանց նշագրումներով: Պրակտիկաները գնահատվում են ինչպես պրակտիկայի վարիչի, այնպես էլ գործատուի կողմից՝ գործատուի կողմից տրամադրվող բնութագրի հիման վրա: Պրակտիկաների գնահատման հստակ չափանիշներ առկա չեն:

Որակավորման շնորհումը ՄՈՒՀ-ում տեղի է ունենում ամփոփիչ ատեստավորման քննությունների միջոցով: Քննական տոմսերը բաղկացած են երեք հարցից, որոնցից երկուսը՝ տեսական է, իսկ մեկը՝ գործնական բնույթի: Գործնական հարցերը կապված են քոլեջին կից ուսումնական հրապարակների կիրառման հետ:

ՄՈՒՀ-ը վերանայել է իր գնահատման կարգը՝ ավելացնելով գնահատման ռուբրիկներ բանավոր հարցումների համար: Դասախոսները, ովքեր ներգրավված են տվյալ մոդուլի դասավանդման մեջ, մշակել և ներկայացրել են համապատասխան ռուբրիկները, սակայն դրանք չեն կիրառվում բոլոր ամբիոնների դասախոսների կողմից: Փորձը դեռևս տարածված չէ բոլոր ամբիոններում:

Ինչ վերաբերում է կրթական ծրագրերի համեմատական վերլուծությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ ՄՈՒՀ-ը նման գործընթաց չի իրականացրել՝ պատճառաբանելով, որ ՀՀ-ում առկա չեն միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որտեղ իրականցվում են երկաթուղային մասնագիտություններ: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ն անցյալում արդեն ունեցել է մասնագիտական կրթական ծրագրերը Ռուսաստանի Դաշնությունում իրականացվող համանման ծրագրերի հետ համադրելու և համեմատական վերլուծության ենթարկելու փորձառություն:

Որպես այդպիսին Քոլեջը չունի ՄԿԾ-ների մշտադիտարկման կանոնակարգ: ՄԿԾ-ների մշտադիտարկման մեխանիզմ քոլեջը հիմնականում դիտարկում է դասալսումները, որակի ապահովման պատասխանատուի կողմից իրականացվող բավարարվածության հարցումները: Անհարժեշտ է նշել, որ ՄԿԾ-ները համակրագային ձևով չեն վերլուծվում և չեն վերանայվում:

Դատողություններ: Հաշվի առնելով, որ Գյումրու պետական տեխնիկական քոլեջի մասնագիտական ուղղվածությունն ու գործունեությունը բացառիկ են Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական կրթության համակարգում, փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ քոլեջի ներքին և արտաքին շահակիցները անմիջական մասնակցություն են ունեցել պետական կրթական չափորոշիչների և ծրագրերի մշակման գործընթացին՝ վերջիններս համապատասխանեցնելով քոլեջի մասնագիտական կարիքներին:

Քանի որ Հայաստանի երկաթուղային համակարգը գործում է ռուսական երկաթուղային համակարգի սկզբունքներով և փորձի հիման վրա, խումբը դրական է գնահատում ռուսական կրթական փորձի կիրառումը և մասնագիտական նյութերի տեղայնացումը: Միաժամանակ, խումբն ընդգծում է, որ ուսումնական հաստատությունն անհրաժեշտություն ունի ուսումնասիրելու նաև այլ երկրների երկաթուղային մասնագիտական կրթության ոլորտում առկա հաջողված փորձերը՝ այն տեղայնացնելու նպատակով: Այսպիսի բազմակողմանի մոտեցումն ուսումնական հաստատությանը հնարավորություն կտա առավել ճկուն և ժամանակին արձագանքել երկաթուղային ոլորտում տեղի ունեցող տեխնոլոգիական, մասնագիտական և մեթոդաբանական փոփոխություններին, ինչը կխթանի կրթական ծրագրերի բովանդակության արդիականացումը, կնպաստի ուսանողների

մասնագիտական հմտությունների ընդլայնմանը և նրանց մրցունակության բարձրացմանը ինչպես տեղական, այնպես էլ միջազգային աշխատաշուկայում:

Ինչ վերաբերում է կիրառվող դասավանդման մեթոդներին, ապա փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ մասնագիտական մոդուլների դասավանդումը ներառում է տեսական գիտելիքների և գործնական կարողությունների ինտեգրված ուսուցում, ինչի շնորհիվ ուսանողներն արդեն քոլեջում կարողանում են զարգացնել և ձևավորել մասնագիտական մտածողություն: Միաժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ հանրակրթական առարկաների (մասնավորապես՝ երկրաչափություն և ֆիզիկա) ուսուցումը ևս նպատակահարմար է իրականացնել մասնագիտական հստակ համատեքստում՝ ներկայացնելով դրանք երկաթուղային ոլորտից կոնկրետ օրինակների հիման վրա և կապելով ուսանողների ապագա մասնագիտական գործունեության հետ: Այս մոտեցումը կապահովի հանրակրթական առարկաների դասավանդման գործնական ուղղվածությունը, կբարձրացնի ուսանողների մոտիվացիան և հնարավորություն կտա ձեռք բերված տեսական գիտելիքներն անմիջապես կիրառել մասնագիտական կոնկրետ իրավիճակներում և խնդիրների լուծման գործընթացում:

Փորձագիտական խումբը գտնում է, որ մասնագիտական կրթական ծրագրերի համեմատական վերլուծություններն անհրաժեշտ է իրականացնել առաջին հերթին Ռուսաստանի Դաշնության համապատասխան քոլեջների հետ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության երկաթուղային համակարգը մեծապես հիմնված է ռուսական փորձառության վրա: Նման համեմատական վերլուծությունները ՄՈՒՀ-ը կարող է իրականացնել նաև առցանց ձևաչափով, ինչը հնարավորություն կտա արդյունավետ օգտագործելու ռեսուրսները և նվազեցնելու գործընթացի ֆինանսական ծախսերը:

Ծրագրերի շարունակական կատարելագործման և զարգացման նպատակով քոլեջը կարիք ունի ներդնելու կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման քաղաքականություն, որը հնարավորություն կտա ուսումնական հաստատությանը պարբերաբար վերանայել ծրագրերը՝ ապահովելու դրանց համապատասխանությունը աշխատաշուկայի և ժամանակակից պահանջներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ երկաթուղային ոլորտի պետական կրթական չափորոշիչները և դրանց համապատասխան միջին մասնագիտական կրթական ծրագրերը մշակվել են քոլեջի մասնագետների և գործատուների անմիջական մասնակցությամբ՝ հիմք ընդունելով աշխատաշուկայի հստակ ձևակերպված կարիքները, ինչպես նաև այն հանգամանքը, որ ուսանողներին տրվող մասնագիտական առաջադրանքները բխում են իրական աշխատանքի պահանջներից, իսկ դասավանդման և ուսումնառության մեթոդները հիմնված են ոլորտի մասնագիտական առանձնահատկությունների վրա, ինչպես նաև այն, որ ուսումնական հաստատությունն ունի ռուսական երկաթուղային քոլեջների հետ ՄԿԾ-ների համեմատական վերլուծության որոշակի փորձառություն, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը **բավարարում է** չափանիշի 3-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: Ուսանողների հավաքագրման նպատակով Քոլեջն իրականացնում է հետևյալ միջոցառումները. կարիերայի կենտրոնի և պրակտիկայի վարիչի կողմից այցելություններ Գյումրի քաղաքի և հարակից դպրոցներ, հայտարարությունների և տեսահոլովակների տարածում հեռուստաալիքների, ֆեյսբուքյան էջի միջոցով, ինչպես նաև բաց դռների օրերի կազմակերպում:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընդունելությունը վերջին տարիներին ունեցել է հետևյալ պատկերը. 2021-2022 ուստարում կազմել է 47 ուսանող, 2022-2023 ուստարում՝ 53 ուսանող, 2023-2024 ուստարում՝ 63 ուսանող, 2024-2025 ուստարում՝ 31 ուսանող: Անհրաժեշտ է նշել, որ վերջին տարում ՄՈՒՀ-ը գրանցել է ընդունելության նվազում, որը Քոլեջը բացատրում է վերջին շրջանում երկաթուղու աշխատանքների պասիվացմամբ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ընդունելության ծավալները մեծացնելու համար ՄՈՒՀ-ը պլանավորում է ընդլայնել դպրոցներ այցելելու աշխարհագրությունը՝ ներառելով Շիրակի մարզի ավելի շատ գյուղական համայնքներ:

Անհրաժեշտ է նշել, որ հեռակա համակարգում սովորող աշխատակիցների ուսման վարձերը փոխհատուցվում են Հարավկովկասյան երկաթուղու կողմից:

Իսկ ինչ վերաբերում է ուսանողների հեռացումներին, ապա անհրաժեշտ է նշել, որ 2021-2022 ուստարում Քոլեջից հեռացվել է 31 ուսանող, 2022-2023 ուստարում՝ 42 ուսանող, 2023-2024 ուստարում՝ 28 ուսանող: ՄՈՒՀ-ի տրամադրած տվյալները փաստում են, որ հեռացումների հիմնական պատճառներն են՝ անհարգելի բացակայությունները, առարկայական պարտքերը, բնակավայրի փոփոխությունը: Բացակայությունների քանակը նվազեցնելու նպատակով կուրսղեկները փորձում են ընթացիկ կապ պահպանել ծնողների հետ:

Քոլեջում ուսանողների կրթական կարիքների բացահայտումը իրականացվում է կուրսղեկների, որակի ապահովման և կարիերայի ուղղորդման պատասխանատուների միջոցով: Որպես ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ դիտարկվում են հարցումները, կուրսղեկի ժամի շրջանակներում կազմակերպվող քննարկումները, ինչպես նաև կարիերայի ուղղորդման պատասխանատուի կողմից կազմակերպված ոչ ֆորմալ հանդիպումները: Ըստ որակի ապահովման պատասխանատուի իրականացրած հարցումների արդյունքների՝ ուսանողների 92%-ը լիովին բավարարված է կուրսղեկների աշխատանքից:

Իսկ ինչ վերաբերում է ուսանողներին տրամադրվող խորհրդատվական ժամերին, ապա անհրաժեշտ է նշել, որ խորհրդատվական պարապմունքներ առավել հաճախ իրականացվում են քննական մոդուլների, առարկաների գծով՝ քննաշրջանների նախաշեմին և ամփոփիչ ատեստավորումից առաջ: Ոչ ֆորմալ խորհրդատվություններ դասախոսների կողմից տրվում են նաև առանձին դեպքերում, երբ ուսանողը դասի ավարտից հետո ունենում է անհասկանալի հարցեր, կամ նախորդ օրը ունեցել է բացակայություն: Անհրաժեշտ է նշել, որ խորհրդատվական պարապմունքների արդյունավետությունը չի գնահատվում և վերլուծված չէ, թե դրանք որքանով են անդրադառնում

ուսանողների ընդհանուր առաջադիմության վրա։ Լրացուցիչ այլ պարապմունքների ծառայություններ ուսանողներին չեն տրամադրվում։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԳՊՏՔ-ի վարչական կազմից ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրվում է առանց ժամանակային սահմանափակման, ուսանողները ամենատարբեր հարցերով և խնդիրներով անկաշկանդ կարող են դիմել ուսումնական մաս, Կարիերայի ստորաբաժանում, անհրաժեշտության դեպքում նաև տնօրենին: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները իրենց խնդիրները հիմնականում լուծում են կուրսղեկների միջոցով և վարչական անձնակազմին դիմելու անհրաժեշտություն հաճախ չի լինում։

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով քոլեջում առկա է կարիերայի ստորաբաժանում։ Կարիերայի ստորաբաժանումը առաջին կուրսեցիների հետ իրականացնում է դասընթաց բացահայտելու վերջիններիս անձնային ուժեղ և թույլ կողմերը, կազմակերպում է քննարկումներ կապված ներառական կրթության, երեխաների հանդեպ բռնության և այլ թեմաներով, ինչպես նաև կազմակերպվում են քննարկումներ գործատուների հետ։ Կարիերայի ստորաբաժանումը նաև հավաքագրում է տվյալներ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ։ Շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ըստ 2021-2022 ուստարվա տվյալների՝ 164 շրջանավարտներից 26%-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, 13%-ը զորակոչվել է բանակ, 40%-ը աշխատում են, որոնցից 25%-ը՝ իրենց մասնագիտությամբ։ Իսկ ըստ 2022-2023 ուստարվա տվյալների՝ 91 շրջանավարտներից 5%-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, 73%-ը աշխատում են, որոնցից 70%-ը՝ իրենց մասնագիտությամբ։ Զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն դիրքերում են գտնվում «Փոխադրումների կազմակերպում և կառավարում երկաթուղային տրանսպորտում» և «Ավտոմատիկան, հեռուստամեխանիկան և կապը երկաթուղային տրանսպորտում» մասնագիտությունները։ Անհրաժեշտ է նշել, որ շրջանավարտների մեծ մասը աշխատում են «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ում։ Ըստ ՄՈՒՀ-ի տրամադրած տվյալների՝ երկաթուղու աշխատակիցների մոտ 55%-ը քոլեջի շրջանավարտներն են։ Երկաթուղում թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվությունը գործատուն անմիջապես փոխանցում է քոլեջին, որն էլ, կապ հաստատելով շրջանավարտների հետ, աջակցում է նրանց աշխատանքի տեղավորմանը։

ՄՈՒՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության հիմնական մարմինը Ուսանողական խորհուրդն է, ՈՒԽ-ն ունի կանոնադրություն, որտեղ հստակ նշված են կառույցի նպատակները։ ՈՒԽ-ի կողմից նախատեսվող միջոցառումները ամրագրվում են տարեկան աշխատանքային պլաններում, որտեղ նշվում են միջոցառումների կատարման ժամկետները և պատասխանատուները։ Նիստերի արձագարությունների ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՈՒԽ-ն քննարկում և պլանավորում է առաջին կուրսեցիների հետ տեղեկատվական հանդիպումների անցկացումը, ՈՒԽ անդամների համալրման հարցերը, ուսանողների առաջարկությունների հիման վրա միջոցառումների կազմակերպումը և այլն։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նիստերի ընթացքում ուսանողների իրավունքների խախտման կամ պաշտպանությանն ուղղված հարցեր չեն քննարկվել, քանի որ այդպիսի դեպքեր չի գրանցվել։ Փորձագիտական այցից պարզ դարձավ,ՈՒԽ-ի աշխատանքների վերաբերյալ իրազեկման միջոցառումները իրականացվում են կառույցի անդամների միջոցով, որոնք իրենց կուրսերում տրամադրում են տեղեկատվություն

ընթացող աշխատանքների և հայտարարությունների վերաբերյալ: Բացի այդ, ստեղծվել է ինստագրամյան էջ, որտեղ ևս լուսաբանվում են ՈւԽ-ի գործունեությունը:

Քոլեջում գործող կրթական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը գնահատվում է որակի ապահովման պատասխանատուի կողմից՝ հարցումների իրականացման և դրանց վերլուծության միջոցով: Վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից վերհանված խնդիրները հիմնականում վերաբերում են ռեսուրսային անբավարարությանը, մասնավորապես՝ ֆիզկուլտուրայի դահլիճի ոչ բարվոք վիճակին և նիստերի դահլիճի ոչ վերանորոգված վիճակին: Վերջինները մինչ այժմ լուծում չեն ստացել, քանի որ ենթադրում են զգալի ֆինանսական ներդրումներ, որը ՄՈՒՀ-ն այս պահի դրությամբ տրամադրել չի կարող:

Դատողություններ: ՄՈՒՀ-ն ունի ուսանողների ներգրավման հստակ մեխանիզմներ, որոնք ապահովում են դիմորդների հոսքը քոլեջ: Սակայն փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի հանրայնացմանն ուղղված առավել ակտիվ միջոցառումների իրականացումը: Քոլեջի առանձնահատկությունը՝ երկաթուղու ոլորտի մասնագետների պատրաստումը, հիմնականում հայտնի է դարձնում քոլեջին մասնագիտական շրջանակներում, սակայն նպատակահարմար է ընդլայնել իրազեկման աշխատանքները՝ ապահովելով հանրության ավելի լայն շերտերի ներգրավվածությունը:

Նկատելի է, որ հեռակա ուսուցման համակարգում սովորողների թիվը գերազանցում է առկա ուսուցման համակարգում սովորողներին (167 ընդդեմ 148-ի), ինչը ցույց է տալիս, որ ուսումնական հաստատությունը մեծապես սպասարկում է արդեն իսկ աշխատող անձանց՝ մասնավորապես երկաթուղու ոլորտում: Հաշվի առնելով, որ հեռակա ուսուցման ուսանողները մեծ մասամբ զբաղված են մասնագիտական գործունեությամբ, անհրաժեշտ է ստեղծել առցանց հարթակներ, որոնք հնարավորություն կտան ուսանողներին տրամադրել ուսումնական նյութեր և ընթացիկ առաջադրանքներ: Այսօրինակ ճկուն մեխանիզմը կկարողանա ապահովել ուսման ավելի ճկուն կազմակերպում, հնարավորություն տալով ուսանողներին շարունակել ուսումնառությունը՝ անկախ աշխատանքային զբաղվածությունից: Սրանով ՄՈՒՀ-ը կարող է ապահովել ուսանողի ոչ միայն հեռակա համակարգում սովորող ուսանողների պահանջներին համահունչ կրթական գործընթաց, այլ նաև նպաստել ՄՈՒՀ-ի ընդհանուր կրթական գործընթացների զարգացմանը և նորարարությունների ներդրմանը:

Դրական է, որ ուսանողներին տրամադրվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնք որոշակիորեն կարող են նպաստել ուսանողների պատրաստվածությանը քննաշրջանին: Փորձագիտական խումբը նաև գտնում է, որ ՄՈՒՀ-ը կարող է նաև դիտարկել տարբեր խորհրդատվական ծառայությունների մատուցումը, որոնք կլինեն ոչ միայն քննաշրջաններին մոտ, այլև ամբողջ ուսումնական գործընթացի ընթացքում, որն առավել շատ կնպաստի ուսանողի առաջընթացին: Բացի այդ անհրաժեշտ է ուսումնասիրել, թե ինչքանով են այդ խորհրդատվական պարապմունքները խթանում ուսանողների առաջադիմությանը:

Փորձագիտական խումբը դրականորեն գնահատում է այն հանգամանքը, որ քոլեջի Կարիերայի կենտրոնի գործունեության շրջանակներում կազմակերպվում են տարբեր արտալսարանային

պարապմունքներ, իրականացվում է շրջանավարտների տվյալների բազայի համալրում և ապահովվում է նրանց հետագա աշխատանքի տեղավորման աջակցություն: Տեսանելի է, որ Կենտրոնի գործունեության արդյունքում տարեցտարի աճում է մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թիվը:

Եզրահանգում: Ուսանողների հավաքագրման նպատակով կիրառվում են տարբեր մեխանիզմներ, ինչպես նաև գործում են ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներ, ՄՈՒՀ-ում առկա է Ուսանողական խորհուրդ, ուսանողներին տրամադրվում են ընթացիկ և նախաքննական խորհրդատվություններ, ինչպես նաև կարիերայի ծառայություններ, շրջանավարտներին տրամադրվում է տեղեկատվություն թափուր աշխատատեղերի վերաբերյալ, ինչի արդյունքում նկատելի է մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թվի աճ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը **բավարարում է** չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գյումրու պետական տեխնիկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

2020-2025թթ . ԶԾ-ով Քոլեջն իր առջև նպատակադրել է ապահովել որակյալ մարդկային ռեսուրսներով: Քոլեջի դասախոսական համակազմի ընտրությունն իրականացվում է Մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի համաձայն: ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության արդյունքներից պարզ դարձավ, որ մանկավարժական թափուր հաստիքների համալրման համար հայտարարվում և իրականացվում է մրցույթ: 2021թ . -ից սկսած մրցույթով աշխատանքի է ընդունվել 4 դասախոս: Մրցույթն անցած թեկնածուի հետ սկզբնական կնքվում է պայմանագիր երեք ամիս ժամկետով, որը դիտարկվում է նաև փորձաշրջան, որից հետո միայն կնքվում է անժամկետ պայմանագիր:

ՈւՕ և վարչական կազմը աշխատանքի է ընդունվում ոչ մրցույթային կարգով, տնօրենի հրամանի համաձայն: Աշխատակիցները ընտրվում են հաշվի առնելով վերջիններիս համապատասխանությունը քոլեջի կողմից մշակված և հաստատված պաշտոնի նկարագրին: 2024թ . դեկտեմբեր ամսվա դրությամբ Քոլեջն ունի ընդհուր առմամբ 51 աշխատակից:

Քոլեջն ունի 39 դասավանդող, որից 17-ը հիմնական, 13-ը՝ համատեղությամբ, ևս 9 դասավանդող Քոլեջի վարչական կազմի ներկայացուցիչներն են: Անհրաժեշտ է նշել, որ դասախոսական

անձնակազմից 11-ը պրակտիկ ոլորտի մասնագետներ են, որոնք հիմնականում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԻ-ի աշխատակիցներն են: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ մնացյալ մասնագետների մեծ մասը նույնպես ունեցել են պրակտիկ փորձառություն, սակայն ներկայումս գտնվում են կենսաթոշակային տարիքում: Պրակտիկ ոլորտի մասնագետներ ներգրավված են բոլոր կրթական ծրագրերում:

Դասասախոսական կազմին ներկայացված պահանջները հստակեցված են և համապատասխանում են ՊԿՉ-ով սահմանված պահանջներին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մասնագիտական մոդուլների դասավանդողներին ընտրելիս նախապատվությունը տրվում է պրակտիկ ոլորտի մասնագետներին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դասախոսական կազմի որակավորումները հիմնականում համապատասխանում են դասավանդվող առարկաներին, մոդուլներին: Բացառություն են կազմում միայն «Հայոց լեզվի և գրականության ուսուցչի» որակավորում ունեցող մասնագետը, որը դասավանդում է Հայոց պատմություն, Պատմություն, Հասարակագիտություն, Քաղաքագիտություն և սոցիոլոգիայի հիմունքներ, իսկ ինժեներ-տեխնոլոգը՝ ֆիզկուլտուրա: Դասախոսները դասավանդում են նվազագույնը 1 և առավելագույնը 12 մոդուլ կամ առարկա՝ հարակից կամ նույն ուղղության:

Դասախոսների մանկավարժական հմտությունների դասավանդման որակի գնահատումն իրականացվում է դասալսումների, ինչպես նաև ՈԱ պատասխանատուի կողմից կազմակերպված ուսանողների շրջանում հարցումների միջոցով: Դասալսումներն իրականացվում են համաձայն նախապես սահմանված պլան-ժամանակացույցի: ՄՈՒՀ-ը մշակել է դասավանդման մշտադիտարկման ձևաթերթ: Դասալսման ընթացքում հաշվի են առնում մատուցվող նյութի համապատասխանությունը օրացուցային թեմատիկ պլաններին, տեխնիկական միջոցների կիրառումը, դիդակտիկ նյութերի կիրառումը, դասախոսի նյութի բացատրումը հստակ օրինակների միջոցով և այլն: Դասալսումների արդյունքում որպես հիմնական խնդիրներ դուրս են բերվել պրակտիկ ոլորտի դասախոսների շրջանում մանկավարժական մոտեցումների պակասը, օրացուցային պլանների ճիշտ կազման որոշ անհարթություններ և այլն: Դասալսումներ իրականացնում են ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, ամբիոնի վարիչները, մեթոդիստը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը պլանավորել է եռափուլ մեթոդական ներքին վերապատրաստումներ, որոնք անդրադառնալու են վերը նշված խնդիրների լուծմանը: Դեռևս իրականացվել է առաջին փուլը, մյուս երկու փուլերը պլանավորվում են հաջորդ կիսամյակին: Վերապատրաստողը ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալն է:

ՄՈՒՀ-ում իրականացվում են նաև փոխադարձ դասալսումներ փորձի փոխանակման նպատակով, սկսնակ դասախոսները դասալսում են փորձառուների մոտ և հակառակը: Դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոններում:

Ուսանողների շրջանում (հարցմանը մասնակցել է ուսանողների շուրջ 86 %-ը) իրականացված հարցումների վերլուծություններում ուսանողները նշել խնդիրներ կապված դասընթացների հետաքրքիր վարման, ուսանողի գնահատման օբյեկտիվության և անկողմնակալության վերաբերյալ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ընդհանուր առմամբ ուսանողները գոհ են (5 առավելագույնից 4.3 ցուցանիշ) ուսանողները գոհ են դասավանդումից:

Ինչ վերաբերում դասախոսական անձնակազմի մասնագիտական վերապատրաստումներին, ապա անհրաժեշտ է նշել, որ Քոլեջը ֆինանսական միջոցներ չի հատկացնում դասախոսական կազմի մասնագիտական կատարելագործման համար: Սակայն միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ պրակտիկ ոլորտի մասնագետները վերապատրաստում անցնում են իրենց հիմանական գործատուի մոտ: Միևնույն ժամանակ պրակտիկ ոլորտի մասնագետները փորձի փոխանակում են իրականացնում հիմնական դասախոսական կազմի հետ, իսկ Հարավկովկասյան Երկաթուղի ՓԲԸ-ում կազմակերպվող վերապատրաստումներին հրավիրվում են նաև քոլեջի դասախոսները: Մեթոդական վերապատրաստումների դասախոսական անձնակզմը անցնում է ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից: 2021-24թթ. ընթացքում այս վերապատրաստումներին մասնակցել է 18 դասախոս:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ Հիմնական աշխատող դասախոսները քոլեջում կազմում են շուրջ 41%: Դասախոսների միջին տարիքը 45-ն է: Երկաթուղային ՄԿԾ-ների կայունությունը ապահվելու նպատակով ՄՈՒՀ-ը որդեգրել է քաղաքականություն աշխատանքի հրավիրել այն մասնագետներին, ովքեր Երկաթուղում անցնում են կենսաթոշակի և իրենց փորձը կարող են փոխանցել ուսանողներին: Լինելով ոլորտային ուսումնական հաստատություն՝ դասախոսական կազմի մեծ մասը Քոլեջի տարբեր տարիների շրջանավարտներն են: Քոլեջի հաստիքային վարչական աշխատակիցներից 9-ը իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց ներգրավված են նաև դասավանդման գործընթացներում:

Նշվում է, որ քոլեջում սկսնակ դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման գծով համակարգային մոտեցում, հիմնված հստակ աընթացակարգերի վրա, առկա չէ: Խնդրի լուծումը իրենց վրա են վերցնում համապատասխան ամբիոնները, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, ուսումնամեթոդական խորհրդը, այլ դասախոսները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ վերջին տարիներին Քոլեջի դասախոսական կազմի համալրումը իրականացվում է մրցութային կարգով, ինչը նպաստում է ընդունելության գործընթացի թափանցիկության ապահովմանը: Քոլեջի դասախոսական անձնակազմը բաղկացած է փորձառու և բարձր որակավորում ունեցող մասնագետներից, ինչը կարևոր նախադրյալ է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար: Գովելի է նաև, որ բոլոր կրթական ծրագրերում ներգրավված են պրակտիկ ոլորտի ներկայացուցիչներ, որոնք նպաստում են ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը և նրանց պատրաստմանը գործատուների պահանջներին համապատասխան: Բացի այդ, գործատուները հնարավորություն ունեն անմիջականորեն ներգրավվելու ուսումնական գործընթացում՝ փոխանցելով իրենց մասնագիտական փորձն ու պատրաստելով իրենց ապագա գործընկերներին:

Միևնույն ժամանակ, պրակտիկ ոլորտի դասախոսները երբեմն չեն ունենում բոլոր այն մանկավարժական մոտեցումները, որոնք անհրաժեշտ են ուսանողների հետ արդյունավետ աշխատելու համար, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը պետք է պարբերաբար կազմակերպի մասնագիտական վերապատրաստման դասընթացներ՝ ուղղված դասախոսների մանկավարժական հմտությունների զարգացմանը:

Գովելի է, որ ՄՈՒՀ-ը գիտակցում է այս խնդիրը և ձեռնարկում է համապատասխան քայլեր՝ ներքին վերապատրաստումների կազմակերպման և դասախոսների մանկավարժական կարողությունների զարգացման ուղղությամբ: Ավելին, փորձագիտական խումբը խրախուսում է գործատուների հետ համագործակցության պարբերական շարունակությունը և նրանց մանկավարժական կարողությունների զարգացմանը նպաստող միջոցառումների իրականացումը: Կարևոր է նաև ընթացիկ գնահատել այդ վերապատրաստումների ազդեցությունը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ը ներդրել է դասավանդման արդյունավետության գնահատման մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս ընթացիկ կարգով բացահայտել դասավանդման ընթացքում առաջացած խնդիրները, ինչպես նաև դասախոսների մասնագիտական կարիքները: Այս գործընթացը նպաստում է նաև վերապատրաստման ծրագրերի անհրաժեշտության բացահայտմանը և դրանց կազմակերպմանը, ինչը վկայում է ՄՈՒՀ-ի նախաձեռնողականության մասին՝ դասավանդման գործընթացի շարունակական բարելավման ձգտման ուղղությամբ: Անդրադառնալով դասախոսական անձնակազմի մասնագիտական վերապատրաստումների՝ հարցը գործատուն մասնակիորեն վերցրել է իր պատասխանատվության տակ, քանի որ մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսական կազմի մեծ մասը ըպրակտիկ ոլորտի մասնագետներ են, և նրանց վերապատրաստումները հիմնականում կազմակերպում է «Հարավկովկասյան երկաթուղին»:

Փորձագիտական կազմի վերլուծությունները ցույց են տալիս, որ ՄՈՒՀ-ի դասախոսական կազմը համեմատաբար կայուն է, ինչին նպաստել են նաև այն բոլոր մոտեցումները, ինչպիսիք են պրակտիկ ոլորտի մասնագետների, թոշակային տարիքի աշխատողների և շրջանավարտների ներգրավումը: Կայունության հիմքերը ապահովում են նաև ՄՈՒՀ-ի համագործակցությունը իր հիմնական գործատուի՝ Հարավկովկասյան երկաթուղու հետ, որը հնարավորություն է տալիս շարունակական փորձի փոխանցմանը և համապատասխան մասնագետների ներգրավմանը կրթական գործընթացում:

Դրական է, որ ՄՈՒՀ-ում առկա են որոշակի մենթորության մեխանիզմներ, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտություն ներդնելու հստակ կանոնակարգված մոտեցում, որտեղ թե մենթորի, թե սկսնակ դասախոսի դերերն ու պարտականությունները կլինեն հստակ սահմանված: Հստակ համակարգված մենթորության մոտեցումը կօգնի ապահովել համաչափ աջակցություն սկսնակ դասախոսների կողմից, կօգնի արդյունավետորեն հետևել նրանց առաջընթացին և ուղղորդել նրանց մասնագիտական աճը՝ յուրաքանչյուր փուլում ապահովելով անհրաժեշտ աջակցություն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գյումրու պետական տեխնոլոգիական քոլեջը ունի հստակ քաղաքականություն՝ որակյալ կադրեր ընտրելու ուղղությամբ, ինչպես նաև բոլոր ՄԿԾ-ներում ներգրավված են պրակտիկ ոլորտի մասնագետներ, առկա են դասավանդման արդյունավետության գնահատման մեխանիզմներ, որոնք նպաստում են դասախոսական կազմի կարիքների բացահայտմանը և համապատասխան վերապատրաստումների կազմակերպմանը, քոլեջի դասախոսական կազմը համեմատաբար կայուն է, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: Հետազոտությունը չի դիտարկվում որպես ԳՏՊՔ-ի զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը: ՄՈՒՀ-ում բացակայում է կանոնակարգված հետազոտական գործունեության իրականացման քաղաքականություն: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ հետազոտական գործունեության ոլորտում առկա է նաև ինստիտուցիոնալ մակարդակում գիտակցված խնդիր, ինչը հաստատվում է նրանով, որ ՄՈՒՀ-ը երբեմն չի կարողացել հստակեցնել, թե քոլեջային մակարդակում, որ աշխատանքներն են դիտարկվում որպես հետազոտություն:

Քոլեջում հետազոտական աշխատանքը մասնագիտական մոդուլների բաղկացուցիչ մաս չի համարվում, չեն սահմանվել նաև հետազոտական բնույթի աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներ և պահանջներ: Ուսանողներին տրվող հանձնարարություններում հետազոտական ուղղվածությամբ առաջադրանքները սակավաթիվ են. որոշ ամբիոնների դասախոսների կողմից սահմանափակվում են հիմնականում ռեֆերատների հանձնարարումներով: Միևնույն ժամանակ, փորձագիտական հանդիպումներից պարզվեց, որ որոշ դեպքերում ուսանողներին տրամադրվում են վերլուծական բնույթի առաջադրանքներ, օրինակ՝ ուսումնական հրապարակում խնդիրների հայտնաբերում, բեռների փոխադրման վերաբերյալ հաշվարկների կատարում և այլն:

Ինչ վերաբերում է դասախոսական կազմին, ապա վերջիններս նույնպես ակտիվ հետազոտական գործունեություն չեն իրականացնում: Քոլեջը դա հիմնականում պայմանավորում է նրանով, որ դասախոսական կազմի գերակշիռ մասը պրակտիկ մասնագետներ են, որոնք չունեն բավարար ժամանակ և մոտիվացիա նման բնույթի աշխատանքներ իրականացնելու համար: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ մասնագիտական հայերեն գրականության անբավարարության պայմաններում դասախոսական կազմի որոշ ներկայացուցիչներ ուսումնասիրում են Ռուսաստանի Դաշնությունում երկաթուղային ոլորտում իրականացվող զարգացումները: Ուսումնասիրված ռուսալեզու մասնագիտական գրականությունն թարգմանվում և դասախոսների կողմից ներառվում են ուսանողներին տրվող ուսումնառության նյութերում: Ինչպես նաև ժամանակ առ ժամանակ ամբիոններում տեղի են ունենում քննարկումներ, դասախոսները հանդես են գալիս ներամբիոնային զեկույցներով:

Հարկ է նշել, որ Քոլեջում առկա չեն դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտական գործունեության ոլորտում Քոլեջի հավակնությունների և պլանավորման բացակայությունը կարող է սահմանափակել ուսանողների հնարավորությունները ծանոթանալու մասնագիտական նորարարություններին: Փորձագիտական խումբը նշում է, որ ԳՊՏՔ-ն անհրաժեշտություն ունի նախ և առաջ մշակելու հետազոտական գործունեության իրականացման քաղաքականություն՝ հստակեցնելով հետազոտության դերը կրթական գործընթացում: Միաժամանակ, փորձագիտական խումբը կարևորում է, որ մինչև այդ քաղաքականության մշակումը, ՄՈՒՀ-ն նախ քննարկի և հստակեցնի այն հիմնական ուղղությունները, որոնց շրջանակներում ուսանողները կարող են իրականացնել հետազոտական աշխատանքներ: Այդ հետազոտությունները պետք է ուղղված լինեն ուսանողների մասնագիտական մտածողության զարգացմանը, մասնագիտական կարողությունների ամրապնդմանը, ինչպես նաև որպես մասնագետների կայացմանը: ՄՈՒՀ որպես հնարավոր ուղղություններ կարող է դիտարկել մասնագիտական ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրությունը, երկաթուղային ուղևորափոխադրումների անվտանգության բարձրացման նոր մեթոդների վերլուծությունը և այլն:

Միաժամանակ, փորձագիտական խումբը նշում է նաև, որ անհրաժեշտ է մշակել և ներդնել ընթացակարգեր, որոնցով հստակորեն կսահմանվեն հետազոտական աշխատանքների իրականացման պահանջներն ու գնահատման չափորոշիչները: Նման մոտեցումը կարող է նպաստել ուսումնական գործընթացում նորարարական մեթոդների ներդրմանը և բարձրացնել ուսանողների մասնագիտական պատրաստվածության որակը:

Ինչ վերաբերում է դասախոսական կազմին, ապա փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտական աշխատանքներ, նաև միջազգային փորձի ուսումնասիրություններ պետք է իրականացնեն բոլոր դասախոսները, որը կնպաստի նաև մասնագիտության մեջ նորարարությունների տեղեկացվածությանը և ինչպես նաև ուսանողներին մատուցվող ուսումնառության նյութերի արդիականացմանը: Նման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է նաև մշակել և ներդնել համապատասխան խթանման մեխանիզմներ: Այս մոտեցումը հնարավորություն կընձեռի մասնագիտական ոլորտում կուտակված փորձի ուսումնասիրման և փոխանցման համար: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ամբիոնների ներսում դասախոսների կողմից զեկուցումներ ներկայացնելու փորձառությունը՝ նշելով, որ այն կնպաստի մասնագիտական ոլորտում առկա զարգացումների բացահայտմանը, նորարարական գաղափարների տարածմանը, ինչպես նաև դասախոսական կազմի միջև մասնագիտական քննարկումների ակտիվացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գյումրու պետական տեխնիկական քոլեջում բացակայում են հետազոտական գործընթացը խրախուսող քաղաքականությունն ու մեխանիզմները, ՄՈՒՀ-ի համար հետազոտական աշխատանքների իրականացման ուղղություններն անորոշ են, հետազոտական բաղադրիչը չի հանդիսանում մասնագիտական մոդուլների լիարժեք բաղկացուցիչ մաս, ինչպես նաև դասախոսական կազմը ներգրավված չէ հետազոտական գործունեության մեջ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը **չի բավարարում** չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: ՄՈՒՀ-ի 2020-2025թթ . ԶԾ խնդիրներից է ձգտել իրականացնել առկա և հեռակա կրթական ծրագրերի շրջանակներում կրթական ծրագրերով նախատեսված բոլոր գործնական, տեսական և հետազոտական աշխատանքների ապահովումը համապատասխան նյութատեխնիկական ռեսուրսներով, ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող ենթակառուցվածքներ:

Ուսումնական գործընթացը կազմակերպվում 1846,24 ք/մ ընդհանուր մակերեսով շենքում: Քոլեջն ունի 7 մասնագիտական լսարան (Երկաթուղու շարժակազմ, Փոխադրումների կազմակերպումը և կառավարումը երկաթուղային տրանսպորտում, Երկաթուղու կայարան և հանգույց, Ավտոմատիկա, հառուստամեխանիկա և կապ, Հաշվապահական հաշվառում, Տնտեսագիտություն, Գծագրություն), 4 առարկայական լսարան (հանրակրթական կրթամասի առարկաների համար), 3 լաբորատորիա (էլեկտրատեխնիկայի, Ֆիզիկայի, ԱԿՈՒ լաբորատորիա): ՄՈՒՀ-ում գործում է կաբինետային համակարգ՝ յուրաքանչյուր առարկա կամ մոդուլ իրականցվում է իր համար նախատեսված մասնագիտական լսարանում: Անհրաժեշտ է նշել, որ լսարանները հագեցած են համապատասխան սարքավորումներով և ստենդներով: Չնայած նրան, որ սարքավորումները այդքան էլ ժամանակից չեն, սակայն գտնվում են աշխատող վիճակում: ՄՈՒՀ-ն ունի նաև 2 համակարգչային լսարան՝ հագեցած 38 համակարգիչներով անհրաժեշտ ծրագրային ապահովմամբ: Քոլեջն ունի 3 պրոյեկտոր, որից մեկն անշարժ է՝ տեղայնացված գրադարանում, իսկ երկուսը՝ շարժական:

ՄՈՒՀ-ն իր բակային տարածքում ունի երկու մասնագիտատեխնիկական հրապարակ, որտեղ քոլեջն իրականցնում երկաթուղային մասնագիտությունների ուղղությամբ գործնական աշխատանքներ:

Քոլեջն ունի կաթսայատուն, ավտոտնակ, ինչպես նաև հանրակացարան, ֆիզկուլտուրայի դահլիճ, որոնք ՄՈՒՀ-ի կողմից չեն կիրառվում, վերջիններս կարիք ունեն հիմնանորոգման:

Քոլեջի գրադարանային ֆոնդը կազմում է շուրջ 24,200 միավոր, որից 17,102-ը մասնագիտական գրականություն է՝ հայերեն (1,368 միավոր) և ռուսերեն (15,734 միավոր) լեզուներով: Գրադարանը ներառում է նաև գեղարվեստական գրականություն (6,094 միավոր հայերեն և ռուսերեն լեզուներով) և ուսումնառության այլ նյութեր (1,004 միավոր): Սակայն գրքերի հաշվառման քարտարան կամ էլեկտրոնային շտեմարան առկա չէ, իսկ թվայնացված գրականություն չի ապահովվում: Գրադարանի

օգտագործման մակարդակը հարաբերականորեն ցածր է, քանի որ դասախոսները հիմնականում ուսանողներին ապահովում են անհրաժեշտ ուսումնառության նյութերով: Հայերեն մասնագիտական գրականության համալրումը հիմնականում իրականացվում է դասախոսների կողմից՝ ռուսերենից թարգմանված գրքերի միջոցով:

2021թ. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից վերանորոգվել է թվով 4 լսարան և 1 լսարան ապահովվել է անհրաժեշտ գույքով: Վերջին տարիներին Քոլեջը իր միջոցներով իրականացրել է ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես՝ բարելավվել է քոլեջի շենքային պայմանները, նկուղը և ապաստարանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնական պարապմունքների, պրակտիկաների իրականացման համար քոլեջն օգտագործում է նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները, մասնավորապես՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի, «ԱՐԹ ՊՐՈԳՐԵՍ» ՍՊԸ-ի հնարավորությունները: 2021-2024թթ-ին քոլեջի նյութատեխնիկական բազան թարմացնելու և ժամանակակից պայմաններին համապատասխանեցնելու նպատակով գնվել է համակարգչային տեխնիկա, մասնավորապես համակարգիչներ, համակարգչային մոնիտորներ, անխափան սնուցման սարքեր և լազերային տպիչ սարք: 2023թ-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից քոլեջին է տրամադրվել դյուրակիր համակարգիչ: Քոլեջի բոլոր համակարգիչները արդիականացվել և հզորացվել են: Քոլեջի մասնագիտական լսարանները հագեցած են դիդակտիկ նյութերով: Քոլեջի առջև դրված ԶԾ խնդիրներից է նաև ապահովել քոլեջի ֆինանսական կայուն հոսքեր: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ 2023թ. կտրվածքով Քոլեջի ընդհանուր ծախսերի 85,9 %-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին, 6,4 %-ը՝ կրթաթոշակի ծախսերին, 5,0 %-ը՝ տնտեսական ծախսերին, իսկ 1,6 %-ը՝ ծառայությունների ձեռքբերման ծախսերին:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դրամաշնորհային ծրագրերի մասնակցության և ֆինանսավորման այլ մոդելների կիրառման դեպքեր քոլեջում առկա չեն: 2023թ. քոլեջի բյուջեի եկամուտների 80,10 %-ը կազմում են պետական ֆինանսավորումից մուտքերը, իսկ 19,90 %-ը՝ ուսանողների վարձավճարներից մուտքերը: Վերջին տարիներին ուսման վարձի փոփոխություն չի արձանագրվել: Որպես լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր, քոլեջը մինչև 2021թ. իրականացրել է կարճաժամկետ դասընթացներ երկաթուղու ուղղությամբ, որի պատվիրատուն եղել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն:

Քոլեջում գործում է արտաքին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային (Mulberry) համակարգը: Քոլեջն ունի պաշտոնական էլեկտրոնային փոստ, որին ուղղվող դիմումներին և նամակներին համապատասխան ընթացք է տրվում:

Քոլեջի մուտքը հարմարեցված է հատուկ կարիքներ ունեցող շահակիցների համար, մասնավորապես՝ կառուցվել է թեքահարթակ, և հատուկ կարիքներ ունեցող ուսանողների դասապրոցեսը կարող է կազմակերպվել առաջին հարկում: Քոլեջն ունի հատուկ կարիքներ ունեցող երկու ուսանող, որոնք չունեն հենաշարժողական խնդիրներ:

Որպես ապաստարան հատկացված տարածքը բարվոք վիճակում է: Քոլեջի տարածքը տեսահսկվում է: Տեսահսկման ծառայությունը միացված է պատվիրակված արտաքին ընկերության, որն իրականացնում է գիշերային վերահսկողություն:

ԳՊՏՔ որակի ապահովման կենտրոնը 2024թ. մայիսի 14-ից 21-ն իրականացրել է ուսանողների կարիքների վերհանման և ռեսուրսներից բավարարվածության գնահատման հարցում, որին մասնակցել են առկա համակարգում սովորող ուսանողների 79%-ը: Ուսանողները հիմնականում բավարարված չեն եղել Քոլեջի մարզադահլիճից և նիստերի դահլիճից: Համեմատաբար ցածր է նաև ինտերնետ հասանելության ցուցանիշը: Ուսանողների 92%-ը լիովին բավարարված են ջեռուցման համակարգից:

ԳՊՏՔ որակի ապահովման կենտրոնը 2024թ. Հունիս ամսին իրականացրել է աշխատակիցների կարիքների վերհանման և ռեսուրսներից բավարարվածության գնահատման հարցում: Հարցմանը մասնակցել են Քոլեջի աշխատակիցների 93%-ը: Ըստ վերլուծության արդյունքների՝ աշխատակիցների 30%-ը բավարված չեն իրենց աշխատավարձի չափից, իսկ 25%-ը՝ սոցիալական երաշխիքներ բացակայությունից: Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացված հարցման արդյունքների համաձայն՝ ուսանողներն ու դասախոսները իրենց դժգոհությունն են հայտնել քոլեջում բուժկետի բացակայության վերաբերյալ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում հիմնականում ունի անհրաժեշտ ռեսուրսներ և ուսումնական միջավայր: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը ընդգծում է, որ, չնայած ՄՈՒՀ-ի տեխնիկական հագեցվածությունը ամբողջությամբ չի համապատասխանում ժամանակակից պահանջներին, այնուամենայնիվ գործարկվող սարքավորումները բավարարում են Երկաթուղու ոլորտի պահանջներին և լիովին համահունչ են գործատուի՝ Երկաթուղու ՓԲԻ-ի միջավայրին: Քոլեջը, որպես ոլորտային ուսումնական հաստատություն, իր ռեսուրսների՝ ինչպես նյութական, այնպես էլ մարդկային՝ զարգացման ուղղությունները, տրամաբանականորեն կապված են Երկաթուղու ՓԲԻ-ի զարգացման ռազմավարական միտումների հետ: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ Քոլեջի ռեսուրսների զարգացումը ուղղակիորեն կապված է գործատուի՝ Երկաթուղու ՓԲԻ-ի, զարգացման հետ: Փորձագիտական խումբը նաև նշում է, որ ՄՈՒՀ-ը կարող է ստեղծել և զարգացնել առցանց միջավայր, որտեղ կտեղադրվեն ուսումնական վիդեոհոլովակներ, արդի մասնագիտական գրականություն և նյութեր տարբեր զարգացած երկաթուղային համակարգերի վերաբերյալ, ինչի շնորհիվ ուսանողները հնարավորություն կունենան իրականացնել համեմատական վերլուծություններ առաջատար երկաթուղային համակարգերի և տեղում առկա սարքավորումների միջև՝ նպաստելով ուսանողների առաջընթացային և վերլուծական մտածողության զարգացմանը:

Դրական է նաև, որ ՄՈՒՀ-ն իր ներքին ռեսուրսներով նախաձեռնում է լսարանների վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև ՄՈՒՀ-ի հիմնական գործընկերը աջակցում է քոլեջին բարենորոգման աշխատանքներում, ինչը ապահովում են շենքային պայմանների շարունակական բարելավմանը:

Քոլեջի գրադարանային ֆոնդը հիմնականում համապատասխանում է մասնագիտական կրթության պահանջներին: Այնուամենայնիվ, գրադարանի թվայնացման գործընթացի իրականացումը կնպաստի գրադարանային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարմանը և օգտագործմանը: Փորձագիտական խումբը նաև կարևորում է գրադարանից օգտվելու մշակույթի խթանումը, որի

նպատակով նպատակահարմար կլինի, որ դասախոսական կազմը խրախուսի ուսանողներին օգտվել լրացուցիչ մասնագիտական գրականությունից՝ համապատասխան ընթերցանության հանձնարարություններով: Սա կնպաստի ուսանողների ակադեմիական ինքնուրույնության զարգացմանը և գրադարանի ռեսուրսների առավել նպատակային կիրառմանը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ը ձեռնարկում է համապատասխան միջոցներ տարածքի անվտանգության ապահովման ուղղությամբ, ինչպես նաև ստեղծում է որոշակի պայմաններ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար: Այս քայլերը նպաստում են ուսումնական միջավայրի ներառականության բարձրացմանը և ապահով կրթական պայմանների ստեղծմանը, ինչը կարևոր նախադրյալ է բոլոր շահակիցների հավասար հնարավորությունների ապահովման համար:

Դրական է, որ ՄՈՒՀ-ն ունի որոշակիորեն կայուն ֆինանսական մուտքեր, սակայն փորձագիտական խումբը նշում է, որ զարգացման և նյութատեխնիկական բարելավման տեսանկյունից առկա ֆինանսական մոդելը երկարաժամկետ կտրվածքով բավարար չէ, եթե չներգրավվեն լրացուցիչ եկամուտների աղբյուրներ: Ներկայումս Քոլեջը չի կիրառում այլընտրանքային ֆինանսավորման կայուն մեխանիզմներ, ինչպիսիք են դրամաշնորհային ծրագրերը կամ վճարովի մասնագիտական վերապատրաստման ծրագրերը, ինչը սահմանափակում է ֆինանսական հոսքերի դիվերսիֆիկացման հնարավորությունները:

Ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացման ապահովումը ոչ միայն կնպաստի կրթական հաստատության կայուն զարգացմանը, այլև հնարավորություն կընձեռի բարձրացնել դասախոսական և վարչական անձնակազմի աշխատավարձերը՝ խթանելով մասնագիտական որակավորման շարունակական զարգացումը և աշխատակիցների մոտիվացիան: Բացի այդ, լրացուցիչ ֆինանսական հոսքերը կարող են ծառայել նյութատեխնիկական բազայի արդիականացմանը, ապահովելով ուսանողների համար առավել հարմարավետ և արդի պահանջներին համապատասխան ուսումնառության պայմաններ:

Դրական է նաև այն, որ ՄՈՒՀ-ն իրականացրել է ռեսուրսներից բավարարվածության հարցումներ, ինչը վկայում է այն մասին, որ ՄՈՒՀ-ի շահակիցները հիմնականում գոհ են առկա ռեսուրսներից: Միևնույն ժամանակ, վերհանված խնդիրները, որոնք հիմնականում վերաբերում են ենթակառուցվածքային բարելավումներին, պահանջում են երկարաժամկետ լուծումներ, քանի որ իրենց իրականացումը ենթադրում է զգալի ֆինանսական ներդրումներ, որոնք ներկայումս ՄՈՒՀ-ը չունի:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գյումրու պետական տեխնոլոգիական քոլեջն ունի բավարար շենքային և լաբորատոր պայմաններ, որոնք հնարավորություն են ընձեռում մասնագիտությունների շրջանակներում ուսանողներին ձեռք բերել սահմանված վերջնարդյունքները, ՄՈՒՀ-ը նաև համագործակցում է գործատուների հետ և կիրառում վերջինիս ռեսուրսները, որոշակիորեն առկա է ապահով և ներառական միջավայր, առկա է համապատասխան մասնագիտական գրականություն, իրականացվում են ռեսուրսներից բավարարվածության հարցումներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը **բավարարում է** չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: Քոլեջի ստորաբաժանումները ուսումնական տարվա կտրվածքով ներկայացնում են իրենց հաշվետվությունները հաստատության կազմակերպական կառուցվածքով սահմանված ենթակայությամբ, օրինակ՝ ամբիոնի վարիչները, գրադարանավարը, կարիերայի կենտրոնը, պրակտիկայի վարիչը հաշվետու են ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին, կուրսղեկերը՝ դաստիարկաչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին: Համապատասխանաբար, տնօրենի տեղակալները հաշվետու են տնօրենին, տնօրենը՝ ԿԽ-ին:

Հաշվետվությունների ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ դրանք չունեն ուղիղ և համակարգված կապ Զարգացման ծրագրում սահմանված նպատակների հետ: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ որոշ հաշվետվություններում ներառված են վերլուծական տարրեր: Մասնավորապես, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի հաշվետվությունում ամփոփված են նրա ենթակայության տակ գտնվող ստորաբաժանումների գործունեության արդյունքները, ներկայացված են մի շարք քանակական վերլուծություններ՝ կապված ուսանողների ընդունելության, ամփոփիչ ատեստավորման գործընթացների հետ, ինչպես նաև ներառված են տվյալներ ուսումնական հաստատությունում իրականացվող միջոցառումների վերաբերյալ, ներառյալ գործատուների հետ հանդիպումները, կազմակերպված սեմինարները և այլ կրթական նախաձեռնությունները: Բացի այդ, հաշվետվություններում առանձնացվում են նաև առկա խնդիրները, որոնք հիմնականում վերաբերում են դասավանդման մեթոդների ընտրության և դրանց արդյունավետ կիրառման դժվարություններին, որոնք ի հայտ են եկել դասալսումների արդյունքում: Հաշվետվությունները ներառում են նաև հետագա բարելավման ուղղություններով պլանավորումներ . մասնավորապես, 2023-2024 ուսումնական տարվա համար նախատեսվել է բանավոր հարցումների գնահատման համար ռուբրիկների մշակում, ինչպես նաև մանկավարժական մեթոդների կատարելագործման նպատակով վերապատրաստումների կազմակերպում:

Քոլեջի ստորաբաժանումների կատարած աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության և արդյունքների հիման վրա տնօրենի կողմից կազմվում և կառավարման խորհրդին է ներկայացվում հաշվետվություն, որը քոլեջի գործունեության մասին հիմնական հաշվետու փաստաթուղթն է: 2022-2023 ուսումնական տարվանից տնօրենի հաշվետվությունը ներկայացվում է ներքին գնահատման ձևաչափով, որը ներառում է մեծ թվով քանակական տվյալներ (ուսանողների, շրջանավարտների, դասավանդողների, վարչական աշխատողների վերաբերյալ, գույքի, այլ ռեսուրսների մասին և այլն), համեմատականներ նախորդ տարիների ցուցանիշների հետ, տվյալներ իրականացված միջոցառումների, ինչպես նաև բյուջետային միջոցների վերաբերյալ. հաշվետվությունն ամփոփվում է Քոլեջի ուժեղ ու թույլ կողմերի, հնարավորությունների ու վտանգների արձանագրմամբ:

Քոլեջը չունի պաշտոնական կայքէջ, թեև ունի պաշտոնական էլ. փոստ (technical.college.gyumri@gmail.com), որտեղ նամակները արագ արձագանք են ստանում: Որպես տեղեկատվական հարթակ է օգտագործվում Ֆեյսբուք սոցիալական ցանցը: Քոլեջը և Կարիերայի կենտրոնն ունեն առանձին էջեր, որոնցից վերջինս առավել ակտիվ է: Ընդ որում՝ Քոլեջի էջը, որը գործում է 2015 թվականից, ունի մոտ 1100 բաժանորդ, ԳՊՏՔ էջը բացվել է 2019 թվականի և ունի մոտ 450 բաժանորդ: Սոցիալական հարթակում առկա է տեղեկատվություն իրականացված միջոցառումների մասին, դիմորդներին վերաբերող տեղեկատվություն, սակայն այն չի տալիս հնարավորություն ծանոթանալ, օրինակ, Քոլեջի մասնագիտությունների, նորմատիվ փաստաթղթերի, հաշվետվությունների հետ: Ըստ Քոլեջում իրականացված ուսումնասիրությունների՝ որպես տեղեկատվություն ստանալու հնարավորություն ԳՊՏՔ ֆեյսբուքյան էջից օգտվում է ուսանողների ընդամենը 68%-ը:

Քոլեջի անձնակազմի մեծամասնության կոնտակտային տվյալները հասանելի են ուսանողներին, ծնողներին և գործընկեր կազմակերպությունների աշխատակիցներին, ինչը հնարավորություն է տալիս հարկ եղած դեպքում կապ հաստատել Քոլեջի աշխատակիցների հետ և ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը:

Տեղեկատվության տարածման և գործունեության թափանցիկության ապահովման նպատակով հաջորդ ուսումնական տարում նախատեսվում է կայքէջի ստեղծում, ինչպես նաև ուսանողական խորհրդի առաջարկությամբ՝ ինստագրամյան էջի գործարկում, սակայն այս գործընթացը դեռևս մտահղացման փուլում է:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվել են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված միջոցառումներ: Մասնավորապես՝ իրականացվել են կարճաժամկետ դասընթացներ, որոնք համապատասխանում են մասնավոր հատվածի կարիքներին, և այդ դասընթացների ծրագրերը մշակվել են գործատուի հետ համատեղ: Վերջին 5 տարների ընթացքում մատուցվել են կարճաժամկետ դասընթացներ, որոնց շրջանակներում պատրաստվել են կայարանի և գծանցի հերթապահներ, էլեկտրամեխանիկներ, ճանապարհի և ուղեմասի հերթապահներ: Դասընթացները հիմնականում ստեղծվել են երկաթուղու աշխատակիցների հետ համատեղ, այդ իսկ պատճառով դասընթացների բովանդակությունները և կարիքները քննարկվել են երկաթուղու կառավարիչների հետ: Կարճաժամկետ դասընթացների ունկնդիրների քանակը եղել է 54-ը: Կարճաժամկետ դասընթացների պատվիրատուն Քոլեջի հիմնական շահառու և գործընկեր «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն է, որն այժմ նման պատվեր չի ձևակերպում, ուստի նոր կարճաժամկետ դասընթացներ Քոլեջի կողմից այս պահին չեն իրականացվում:

Փորձագիտական այցից պարվեց, որ Քոլեջը սեփական նախաձեռնությամբ աշխատաշուկայի ուսումնասիրություններ չի իրականացնում և չի նախաձեռնում ու իրականացնում կարճաժամկետ այլ դասընթացներ, որոնք կհամապատասխանեն իր՝ տեխնիկական, կամ հարակից ոլորտներին, հիմնականում սահմանափակելով կարճաժամկետ դասընթացները երկաթուղային մասնագիտություններով: Հասարակության լայն շերտերի համար ՄՈՒՀ-ը այլ միջոցառումներ չի իրականացրել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում առկա են որոշակի հաշվետվողականության մեխանիզմներ: Սակայն հաշվետվությունների բովանդակությունը չի փախկապակվցում Զարգացման ծրագրի նպատակներին, ինչը հնարավորություն չի տալիս դիտարկել և վերլուծել կառավարման ու զարգացման գործընթացները, գնահատել իրականացվող գործընթացների արդյունավետությունը: Թեև տնօրենի հաշվետվությունը ներկայացվում է ներքին գնահատման ձևաչափով, այն առավելապես տեղեկատվական է, առանց չափելի գնահատումների և ամփոփումների:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարար ջանքեր չի գործադրում կարճաժամկետ դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ: Կարևոր համարելով ռազմավարական համագործակցությունը «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հետ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը հնարավորություն ունի ընդլայնելու իր մասնագիտական գործընկերային համագործակցություն շրջանակը՝ ստեղծելով կապեր նաև այլ կազմակերպությունների հետ, շահակիցներին առաջարկելով մասնագիտական վերապատրաստման, կատարելագործման և համանման այլ ծրագրեր:

Փորձագիտական խումբը գտնում է, որ լինելով տեխնիկական ուղղության քոլեջ, հաստատությունը կարող էր առավել բաց և ակտիվ դրսևորվել հանրային պատասխանատվության ոլորտում՝ կիրառելով նորագույն տեխնոլոգիաները: Գործունեության թափանցիկության, տեղեկատվական հասանելիության և հանրության առջև հաշվետվողակության ապահովման համատեքստում որպես խնդիր է դիտարկվում պաշտոնական կայքէջի բացակայությունը: ՄՈՒՀ-ը կարիք ունի ներդնելու պաշտոնական կայքէջ, որը հնարավորություն կընձեռի վերջինիս և՛ փաստաթղթերի, և՛ ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տարածման համար: Քոլեջի ներկայությունը նաև սոցիալական հարթակներում բավականին սահմանափակ է, ինչը խոչընդոտում է տեղեկատվության տարածման արդյունավետությանը: Բացի այդ, Քոլեջի ներկայացվածությունը սոցիալական մեդիայում կնպաստի Քոլեջի ճանաչելիությանը, վարկանիշին, արտաքին և միջազգային կապերի ձևավորմանը, մասնագիտությունների հանրայնացմանը, շահակիցների հետ հեռադարձ կապի լիարժեք ձևավորման:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջի հաշվետվողականության համակարգը միտված չէ Զարգացման ծրագրի նպատակների գնահատմանը, կիրառվող գործիքները չեն ապահովում ուսումնական հաստատության վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունն ու հասանելիությունը, շահակիցների հետ կապը համակարգված չէ, իրականացվող կարճաժամկետ ծրագրերը սակավաթիվ են և չեն իրականացվում Քոլեջի նախաձեռնությամբ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը **չի բավարարում** չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: Գյումրու պետական տեխնիկական քոլեջի Զարգացման ծրագրում որպես հիմնախնդիր է դիտարկվում արտաքին կապերի զարգացումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ ստարաբաժանում չունի: Արտաքին կապերի ձևավորման պատասխանատվությունը ստանձնել է Քոլեջի տնօրենը, ինչպես նաև Կարիերայի կենտրոնի պատասխանատուն, ով համագործակցություն է ձևավորում հիմնականում գործատու կազմակերպությունների հետ:

Քոլեջն իր կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցության պայմանագրեր և հուշագրեր ունի շուրջ 13 կազմակերպության հետ, որոնցից 5-ը դիտարկվում են որպես գործատուներ, այդ թվում՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ, «ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ, «Արթ Պրոգրես» ՍՊԸ, «Հայաստանի հաշվապահների ասոցիացիա» ՀԿ, «Սիրիուս պլյուս» ՍՊԸ: Անհրաժեշտ էնշել, որ ՄՈՒՀ-ի ամենամեծ գործատուն դիտարկվում է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն, որտեղ աշխատում են շրջանավարտներ Քոլեջի գրեթե բոլոր կրթական ծրագրերից (բացառությամբ հաշվողական տեխնիկայի): Համագործակցության շրջանակներում ՄՈՒՀ-ն իրականացնում է ուսանողների պրակտիկաների կազմակերպումը, ինչպես նաև ներգրավում է ոլորտի պրակտիկ մասնագետների:

Քոլեջը համագործակցության որոշակի շրջանակ է ձևավորել նաև ուսումնական հաստատությունների հետ, ինչպիսիք են՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի, ինչպես նաև Շիրակի մարզի մի քանի քոլեջների հետ, որը նպատակ ունի համատեղ միջոցառումների, փորձի փոխանակման իրականացման, սակայն տեսանելի չէ համագործակցության արդյունավետությունը: 2022 թվականին համագործակցության պայմանագիր է կնքվել ՌԴ Ուրալի կապի և հեռահաղորդակցության պետական համալսարանի երկաթուղային քոլեջի հետ, որի շրջանակում Քոլեջի ներկայացուցիչները՝ մասնակցել են նշված համալսարանի կողմից կազմակերպված՝ առցանց միջազգային գիտահետազոտական կոնֆերանսի: Դասախոսական կազմից մեկը նշված կոնֆերանսին հանդես է եկել նաև զեկույցով՝ «ՄՈՒՀ-ի շրջանավարտների մրցունակության վրա ազդող գործոնները» թեմայով, որի համար արժանացել է 2-րդ կարգի դիպլոմի:

Քոլեջը փորձում է քայլեր ձեռնարկել «Էրազմուս+» ծրագրին մասնակցելու ուղղությամբ, սակայն առայժմ հաջողություն չի գրանցել: Միջազգայնացման ուղղությամբ հստակ ընթացակարգերի բացակայությունը ՄՈՒՀ-ը նույնպես իր համար դիտարկում է թույլ կող:

Ինչ վերաբերում է ներքին շահակիցների օտար լեզուների իմացությանը, ապա ըստ ինքնավերլուծության տվյալների դասավանդողների և վարչական աշխատակիցների 100%-ը տիրապետում է ռուսերենին: Համաձայն հարցումների՝ դասախոսների 58%-ը իմացության տարբեր մակարդակներով տիրապետում է անգլերեն, 15%-ը՝ ֆրանսերեն, 3%-ը՝ այլ լեզուների: Ընդ որում՝ 2022 թվականի համեմատ անգլերենին տիրապետող դասավանդողների թիվն ավելացել է 10%-ով: Ուսանողների մոտ 30.4%-ը և 32.6%-ը տիրապետում են համապատասխանաբար անգլերեն և

ռուսերեն լեզուներին: Քոլեջը 2025 թվականին նախատեսվում է իրականացել անգլերենի վերապատրաստումներ ներքին շահակիցների համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջն ունի մշտական և պարբերաբար թարմացվող գործընկեր կազմակերպությունների ցանկ, ինչը նպաստում է Քոլեջի ենթակառուցվածքների զարգացմանը, համագործակցային միջավայրի ձևավորմանը: Դրական է, որ ըստ անհրաժեշտության Քոլեջն ընդլայնում է իր գործընկերների շրջանակը, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝ նոր կրթական ծրագրի ներդրմամբ: Փորձագիտական խումբը նկատում է, որ վերջին տարիների ընթացքում արտաքին կապերի ամրապնդման արդյունքում Քոլեջի դասախոսական կազմը համալրվում է պրակտիկ փորձառությամբ մասնագետներով, ինչը նպաստում է գործնական պարապմունքների արդյունավետ իրականացմանը, անհրաժեշտության դեպքում՝ ռեսուրսների համատեղ օգտագործմանը: Օրինակ, համագործակցությունը և արդյունավետ աշխատանքային հարաբերությունները «ՀԿԵ» ՓԲԸ-ի հետ ուսանողներին հնարավորություն է տալիս անցկացնել իրենց պրակտիկաները գործնական միջավայրերում, ինչը նպաստում է սովորողների մասնագիտական կարողությունների զարգացմանը, նաև մոտիվացիայի աղբյուր է դառնում՝ ապահովելով ուսանողների շփման հնարավորությունը ոլորտի փորձառու մասնագետների հետ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը ներուժ ունի նաև զարգացնելու միջազգային կապերը (հատկապես՝ երկաթուղային մասնագիտությունների մասով ՌԴ-ի հետ)՝ փորձի փոխանկման, կրթական ծրագրերի ուսումնասիրության և համեմատական վերլուծության նպատակով:

Դրական է, որ Քոլեջը փորձում է օգտվել միջազգային ծրագրերին մասնակցության հնարավորություններից, թեև դեռևս արդյունքներ չեն արձանագրվել: Փորձագիտական խումբը խրախուսում է շարունակել այս ուղղությամբ աշխատանքները՝ փնտրելով միջազգային համագործակցության ձևավորման հնարավորություններ: Քոլեջին անհրաժեշտ է այս ուղղությամբ հստակորեն պլանավորել իր աշխատանքները, քանի որ գործընկերային կապերի ընդլայնումը և միջազգային համագործակցության ձևավորումը կնպաստի կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացմանը և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը:

Միջազգայնացման ծրագրերին մասնակցության համար Քոլեջն անհրաժեշտություն ունի զարգացնելու անձնակազմի և ուսանողների օտար լեզվի (հատկապես անգլերենի) կարողությունները, ինչը կարևոր է մասնագիտական հաղորդակցման և միջազգային փորձին ծանոթանալու համար: Միայն այդ պարագայում հնարավոր կդառնա միջազգային ծրագրերում Քոլեջի լիարժեք ներգրավվածությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գյումրու տեխնիկական քոլեջն արդյունավետորեն համագործակցում է գործատու կազմակերպությունների, մասնավորապես՝ «ՀԿԵ» ՓԲԸ-ի հետ, ունի համագործակցության շրջանակ նաև ուսումնական հաստատությունների, մասնավոր գործարարների հետ, համագործակցությունը նպաստում է ռեսուրսների համատեղ կիրառմանը, ուսանողների պրակտիկաների կազմակերպումը, գործատու դասավանդողների ներգրավմանը,

քայլեր է ձեռնարկում միջազգային կապեր ձևավորելու ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը **բավարարում է** չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: ՄՈՒՀ-ում ներքին որակի ապահովման գործընթացների ակտիվ իրականացումը հիմնականում մեկնարկել է 2024 թվականին: Նույն տարում որակի ապահովման պատասխանատուի կողմից մշակվել և հաստատվել են որակի ապահովման քաղաքականությունը, որակի ապահովման կենտրոնի կանոնակարգը և կենտրոնի աշխատանքային պլանը: Որակի ապահովման քաղաքականության նպատակն է ապահովել քոլեջի ուսումնառության, հետազոտական և կառավարման գործընթացների որակի արդյունավետության բարձրացումը:

Քաղաքականության համաձայն՝ որակի ապահովման համակարգի առաքելությունն է մշտադիտարկել Քոլեջի գործունեության բոլոր ոլորտներում իրականացվող գործընթացները, ինչպես նաև հիմնվելով շահառուների կարծիքների վրա՝ նպաստել գործունեության շարունակական կատարելագործմանը և արդյունավետության բարձրացմանը: Որակի ապահովման գործընթացների կառավարման նպատակով մշակվել է պաշտոնի անձնագիր, որտեղ ներկայացված են նաև որակի ապահովման պատասխանատուի գործառույթները: Սակայն ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ, բացի որակի ապահովման պատասխանատուի հիմնական գործառույթներից, փաստաթղթում ներառված են նաև այլ գործառույթներ, որոնք ամբողջությամբ չեն համապատասխանում նշված պաշտոնի բնույթին, օրինակ՝ ուսանողների կողմից կրթական ծրագրերի յուրացման գնահատում, ինչպես նաև քննությունների բողոքարկման և վերահանձնման գործընթացների կազմակերպում: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի որակի ապահովման հաստատված փաստաթղթերում ՈԱ գործընթացները կանոնակարգվում են բաժնի, մինչդեռ բոլոր մյուս փաստաթղթերում կառուցվածքային ստորաբաժանումը ներկայացվում է որպես կենտրոն:

Որակի ապահովման գործընթացները համակարգվում են ՈԱ պատասխանատուի կողմից, ով զբաղեցնում է 0.75 հաստիքային միավոր: Որակի ապահովման կենտրոնի գործառույթների ապահովման նպատակով Քոլեջը տրամադրել է աշխատանքային տարածք, նյութական ռեսուրսներ: Գյումրու պետական տեխնոլոգիական քոլեջի Տնօրինական խորհրդի որոշմամբ, որակի ապահովման կենտրոնին կից ստեղծվել է որակի ապահովման 14 անձից կազմված հանձնախումբ, որում ներգրավված են նաև դասախոսներ և ուսանողներ՝ ապահովելով շահակիցների տարբեր խմբերի

մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում: ՈԱ հանձնախմբի անդամների աջակցությամբ անց են կացվել հարցումներ արտաքին և ներքին շահակիցների շրջանում:

Որակի ապահովման պատասխանատուի 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ որակի ապահովման աշխատանքներն հիմնականում կենտրոնացած են տվյալների վերհանման և շահակիցների կարիքների գնահատման գործընթացների վրա: Աշխատանքային պլանում նախատեսված են նաև այլ գործողություններ, մասնավորապես՝ շահակիցների կարիքների գնահատման հարցաշարերի վերանայում, որակի ապահովման ներքին համակարգի մի շարք իրավական ակտերի մշակում, ինչպես նաև ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության գործընթացի համակարգում: Աշխատանքային պլանում սահմանված են նշված գործողությունների իրականացման գործիքակազմը, ռեսուրսները և պատասխանատվությունների բաշխումը ստորաբաժանումների միջև:

Մինչև 2024թ. ավարտը ՈԱ պատասխանատուի պաշտոնը զբաղեցրել է այլ անձ, որը համակարգել է որակի ապահովման փաստաթղթերի ներդրումը, կարիքների վերհանումը և ինքնավերլուծության գործընթացները, սակայն վերջինս երկրից տեղափոխվելու պատճառով լքել է քոլեջը. նոր նշանակված ՈԱ պատասխանատուն առայժմ լիարժեք չի տիրապետում համակարգի գործառույթներին և չունի հստակ պատկերացում հետագա զարգացման ուղղությունների վերաբերյալ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից պարբերաբար իրականացվել են հարցումներ քոլեջի շահակիցների շրջանում՝ ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և գործատուների կարիքները վերհանելու նպատակով: Քոլեջի աշխատակիցները հիմնականում ընդգծում են աշխատավարձերի ցածր լինելը և սոցիալական երաշխիքների բացակայությունը, մինչդեռ ուսանողները բարձրացնում են մարզադահլիճի և դահլիճի վերանորոգման, ինչպես նաև ինտերնետ կապի, դասավանդման մեթոդների բարելավման հարցը: Պետք է ընդգծել, որ բարձրացված խնդիրների մեծ մասը պահանջում են զգալի ֆինանսական ներդրումներ: Որակի ապահովման պատասխանատուի հաշվետվության մեջ նշվում է, որ վերհանված խնդիրների ուղղությամբ քոլեջը պետք է մշակի բարելավման ծրագիր: Սակայն, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բարելավման պլանը չի մշակվել և չի կիրառվել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատման առկա հարցաթերթերը կիրառվել են միայն մեկ անգամ, ինչը բերել է որոշակի արդյունքների ստացման: Գնահատման արդյունքում հարցաթերթերի վերանայման անհրաժեշտություն է առաջացել, սակայն գործընթացը դեռ չի իրականացվել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները բավարար տեղեկացված չեն Քոլեջում որակի ապահովման կենտրոնի առկայության և գործառույթների վերաբերյալ:

Որակի ապահովման համակարգը քոլեջում նոր է ձևավորվում: Գործընթացների մի մասը գտնվում է պլանավորման փուլում, որոշները՝ իրականացման և գնահատման: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում չի իրականացվում որակի ապահովման գործընթացի բենչմարքինգ, չի ուսումնասիրվում այլ քոլեջների փորձն ու առկա չէ որևէ համագործակցություն այդ ուղղությամբ:

Քոլեջի ինքնավերլուծության հիման վրա իրականացված որակի արտաքին գնահատման գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փաստաթղթում ներկայացված են հիմնական վերլուծություններն ու անհրաժեշտ տեղեկատվությունը, սակայն չի ապահովվել վերջինիս տարածումը շահակիցների ամբողջական շրջանում:

Դատողություններ: Դրական է, որ ՄՈՒՀ-ում որակի ապահովման գործընթացների իրականացման նպատակով ներդրվել է համապատասխան փաստաթղթային բազա: Չնայած այն հանգամանքին, որ որոշ փաստաթղթեր պահանջում են վերանայում՝ պայմանավորված որակի ապահովման գործընթացների ոչ անմիջական շեշտադրմամբ որոշ դեպքերում, այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ առկա փաստաթղթերը հիմնականում ուղղված են տվյալների հավաքագրման և վերլուծության գործընթացների ապահովմանը: Այս մոտեցումը կարող է ծառայել որպես կարևոր ուղենիշ որակի ապահովման համակարգի արդյունավետ իրագործման համար:

Դրական է, որ ՄՈՒՀ-ում համալրվել է որակի ապահովման պատասխանատուի հաստիքը և ձևավորվել է որակի ապահովման հանձնախումբ, ինչը կարող է նպաստել ներքին շահակիցների ներգրավվածությամբ որակի ապահովման մշակույթի ձևավորմանը, ինչպես նաև միասնական տվյալների բազայի ստեղծմանն ու դրա հիման վրա հիմնավորված որոշումների կայացմանը: Նկատելի է, որ վերջին շրջանում պարբերաբար իրականացվել են հարցումներ ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և գործատուների շրջանում, ինչը հնարավորություն է տալիս հավաքագրել շահակիցների կարիքներն ու առաջարկությունները: Այս գործընթացը կարող է հիմք հանդիսանալ առավել խորքային վերլուծությունների իրականացման և ապագա որոշումների կայացման համար՝ նպաստելով կրթական ծրագրերի և կառավարման համակարգի շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը նկատում է, որ առկա հարցաշարերը դրական ազդեցություն են ունեցել նախնական տվյալների հավաքագրման և հետազոտական որոշ ուղղությունների սահմանման վրա, սակայն դրանց կրկնվող կիրառությունը կարող է սահմանափակել խորքային և համակարգային տվյալների դուրսբերման հնարավորությունները: Փորձագիտական խումբը գտնում է, որ որակի ապահովման աշխատանքները անհրաժեշտ է կենտրոնացնել ՈԱ քաղաքականությամբ նշված բոլոր ուղղությունների վրա: Այս արդյունքները կարող են նպաստել հիմնավորված որոշումների կայացմանը, որոնք իրենց հերթին կբարելավեն կրթական գործընթացի որակը և նպաստեն ՄՈՒՀ-ի զարգացմանն ու շարունակական կատարելագործմանը:

Դրական է, որ Քոլեջը տրամադրել է որակի ապահովման կենտրոնի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութական և մարդկային ռեսուրսներ, ինչը նպաստում է որակի ապահովման համակարգի գործունեության ամրապնդմանը: Այնուամենայնիվ, որակի ապահովման պատասխանատուի պաշտոնի պարբերական փոփոխությունները կարող են խաթարել գործընթացների կայունությունն ու շարունակականությունը: Հաշվի առնելով դա՝ նպատակահարմար է, որ ՄՈՒՀ-ը որդեգրի որակի ապահովման ոլորտում ավելի երկարաժամկետ պլանավորում, ինչը կնպաստի կազմված պլանների հետևողական իրականացմանը և ինստիտուցիոնալ հիշողության պահպանմանը:

Որակի ապահովման գործընթացների արդյունավետության բարձրացման և համակարգի շարունակականության ապահովման համար կարևոր է նաև աշխատակիցների պարբերական վերապատրաստումը որակի ապահովման սկզբունքների, գործիքակազմի և ընթացակարգերի վերաբերյալ: Վերապատրաստման ծրագրերը հնարավորություն կընձեռեն ձևավորել անհրաժեշտ կարողություններ տվյալների հավաքագրման, վերլուծության և որակի ապահովման գործընթացների կազմակերպման ուղղությամբ՝ նպաստելով կրթական հաստատության կառավարման համակարգի կատարելագործմանը:

Փորձագիտական խումբը նաև նկատում է, որ որակի ապահովման գործընթացների վերաբերյալ շահակիցների տեղեկացվածությունը բավարար մակարդակի վրա չէ, և նրանց ներգրավվածությունը դեռևս սահմանափակ է: Համագործակցությունն այլ ուսումնական հաստատությունների որակի ապահովման կենտրոնների հետ բացակայում է, ինչը նվազեցնում է հնարավորությունը համեմատական վերլուծությունների, լավագույն փորձի փոխանակման և կրթական գործընթացների շարունակական բարելավման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջում որակի ապահովման համակարգի կողմից հավքագրված տվյալների հիման վրա բարելավման որոշումներ չեն կայացվել, առկա է որակի ապահովման պատասխանատուի հաստիքի պարբերական փոփոխություններ, որոնք կարող են խոչընդոտել գործընթացների կայունությանն ու շարունակականությանը, առկա չեն լավագույն փորձի փոխանակման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը **չի բավարում** 10-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Չի բավարարում
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում



Արմեն Հարությունյան
Փորձագիտական խմբի ղեկավար

29-ը ապրիլի 2025թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմեն Հարությունյան- 2000 թվականին ավարտել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Թատերագիտության բաժինը: 2003 թվականին ստացել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2002 թ. -ից դասավանդում է Արվեստի սոցիոլոգիա և Թատրոնի պատմություն Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում, ունի դոցենտի գիտական աստիճան: Մասնակցել է մի շարք վերապատրաստման դասընթացների. «Կամավորի ներառական դպրոց» (ՀՀ ԿԳՄՍ ԵՀՍԿ, Երևան, 2024), «Մասնագիտական կրթական ծրագիր. ակնկալվող ելքային արդյունքներ և ուսանողի գնահատում» (ՀՀ ՈԱԱԿ, Երևան, 2017), «Հանուն արդյունավետ ուսուցման և ուսումնառության» (ԵԹԿՊԻ, 2015), «Թատրոնի կառավարում» (Բոստոն, Նյու Յորք, 2008), «Սոցիոլոգիական որակական հետազոտություններ» (ԵՊՀ, 2001), «Art management, People management» (Թբիլիսի, 1999) և այլ: 2004-2011 թթ. աշխատել է որպես Թատրոնի և կինոյի ֆակուլտետի դեկանի տեղակալ, 2011-2013թթ.՝ ուսումնական մասի վարիչ: 2013-2014թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Մշակույթի և տուրիզմի վարչության մշակույթի բաժնում որպես գլխավոր մասնագետ: 2014-2023թթ. եղել է ԵԹԿՊԻ-ի Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի դեկանը, իսկ 2023թ. -ից Զարգացման գծով պրոռեկտոր է: Մի շարք հոդվածների հեղինակ ու համահեղինակ է:

Աննա Հայրապետյան - 2002թ. -ին ավարտել է Խ.Աբովյանի անվան .հայկական պետական մանկավարժական համալսարանի Տեխնոլոգիա և ձեռնարկչություն ֆակուլտետը: 2002-2024թթ. -ին աշխատել է Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում դասախոս, ամբիոնի վարիչ, ինչպես նաև 2019-2024թթ. -ին համատեղելիությամբ աշխատում է նաև Հրազդանի թիվ 14 հիմնական դպրոցում ուսուցիչ-տեխնոլոգիա: Ունի համակարգչային գիտելիքներ MS Word, Excel, PowerPoint ծրագրերից: Տիրապետում է երկու լեզուների՝ հայերեն և ռուսերեն:

Էլինա Շամխալովա - 2003թ. -ին ավարտել է Ստեփանակերտի գյուղատնտեսական քոլեջի ֆինանսներ և բանկային գործ բաժինը: Այնուհետև 2004-2009 թթ -ին սովորել է ՀՊԱՀ-ի ԱՊՀ ֆինանսներ և վարկ բաժինը և ստացել է դիպլոմավորված մասնագետը որակավորումը, իսկ 2011-2016 թթ-ին եղել է հայցորդ ՀԱԱՀ-ում: 2006-2009թթ.- ին աշխատել է Արդշինինվեստբանկ ՓԲԸ, Ջերմուկ մ/ճ-ում , որպես վարկային մասնագետ: 2010-2023թթ. ին դասավանդել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, որպես դասախոս և Շուշիի տեխնոլոգիական համալսարանում, որպես ավագ դասախոս, ինչպես նաև Շուշիի տեխնոլոգիական համալսարանումում եղել է Որակի ապահովման բաժնի ղեկավար: 2023թ.-ին եղել է Եվրասիա միջազգային համալսարանի հավատարմագրման գործընթացների համակարգող: 2024թ.ին ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինսիտուտում գիտաշխատող է: Մասնակցել է մի շարք վերապատրաստման դասընթացների. World Bank, ՀՀ գյուղ. աջակցության հիմնադրամ, ներդրումային վարկավորում և լիցինգ 09,2008, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (ANQA) մասնագիտական

կրթական ծրագրերի բարելավման մեխանիզմներ 02,2022, Matena առաջնորդություն և մասնագիտական զարգացման միջազգային դպրոց Առաջնորդություն և մոտիվացիա 05,2023, Հայաստանի Հաշվապահների Ասոցացիա ինչպես գրել հաղթող դրամաշնորհային ծրագիր 09,2023, Teachme ուսումնակենտրոն HRM + կադրային գործ 01,2024, AUA Extension, General English course 05.2024: Տիրապետում է՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներին: Ունի հրատարակված 17 գիտական հոդված:

Ալբերտ Թադևոսյան - 2023թ-ին ավարտել է Երևանի պետական հումանիտար տեխնիկական քոլեջի ֆինանսներ բաժինը: 2023թ.-ին մանակցել է «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող փորձագետների պատրաստման դասընթացին: Ունի համակարգչային գիտելիքներ MS Word, Excel, PowerPoint ծրագրերից: Տիրապետում է երկու լեզուների՝ հայերեն և ռուսերեն:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	08 . 12.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Ռեսուրսների դիտարկում	14:00	15:10	70 րոպե
2.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	15:20	16:20	60 րոպե
3.	Հանդիպում քոլեջի տնօրենի տեղակալների հետ	16:30	17:30	60 րոպե

	09.12.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում դասախոսական անձնակազմի հետ	10:30	11:30	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ	11:40	12:10	30 րոպե
4.	Հանդիպում ՈՒԽ ներկայացուցիչների հետ	12:20	13:00	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
6.	Հանդիպում քոլեջի կառավարման խորհրդի անդամներ հետ (առկա և առցանց տարբերակով)	14:20	15:10	50 րոպե
7.	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների (կադրերի բաժնի տեսուչ, մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման պատասխանատու, հաշվապահ, գրադարանավար, մեթոդիստ, պրակտիկայի վարիչ, արխիվավար, լաբորանտ)	15:20	16:20	60 րոպե
8.	Հանդիպում շրջանավարտների հետ	16:30	17:20	50 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	18:30	60 րոպե

	10.12.2024թ		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Դասալսումներ		09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում ուսանողների հետ		10:40	11:30	50 րոպե
3.	Հանդիպում «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի	Հանդիպում «Ավտոմոտիկան, հեռամեխանիկան և կապը տրանսպորտում	11:40	12:40	60 րոպե

	տեսակների)» և «Երկաթուղու էլեկտրաքարշի տեխնիկական շահագործում» կրթական ծրագրերի պատասխանատուների և դասախոսական կազմի հետ	(ըստ տրանսպորտի տեսակների)» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ			
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի փակ քննարկում		12:50	13:50	60 րոպե
5.	Հանդիպում գործատուների հետ		14:00	14:50	50 րոպե
6.	Հանդիպում «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)» և «Երկաթուղու էլեկտրաքարշի տեխնիկական շահագործում» ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Ավտոմոտիկան, հեռամեխանիկան և կապը տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	15:00	15:50	50 րոպե
	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ քննարկում		16:00	18:00	120 րոպե

	11.12.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողութ.
1.	Հանդիպում ՈԱ պատասխանատուի հետ	09:30	10:20	50րոպե
2.	Փորձագիտական խմբի հետ բաց հանդիպում	10:30	11:00	30րոպե
3.	Փորձագիտական խմբի փակ քննարկում	11:10	13:00	100 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի փակ հանդիպում	13:10	14:10	60 րոպե
5.	Փորձագիտական խմբի փակ քննարկում	14:20	16:00	80 րոպե
6.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	16:10	16:30	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	ՄՈՒՀ-ի կողմից իրականացրած ներքին գնատումներ	1
2.	Տնօրենի և ստորաբաժանումների հաշվետվություններ վերջին 3 տարիների համար	2
3.	Հաստիքացուցակ	2
4.	Նախահաշիվներ և կատարողականներ /վերջին 3 տարիների/	2
5.	ԿԽ և մանկավարժական նիստերի արձանագրություններ	2
6.	Ներկայացված 3 ՄԿԾ-ների ամբողջական փաթեթներ՝ ուսումնական պլան, մոդուլային ծրագրեր	3
7.	Դասի պլաններ	3
8.	3 ՄԿԾ-ների շրջանակներում ուսանողներին տրամադրվող ընթացիկ առաջադրանքներ՝ խնդիրներ, իրավիճակային հարցեր, հետազոտական, ինքնուրույն, ռեֆերատային աշխատանքներ	3
9.	Այլ կրթական ծրագրերի պետական քննությունների հարցատոմսեր	3
10.	Ամփոփիչ ատեստավորման նախագահների հաշվետվություններ	3
11.	Ցանկ պրակտիկայի վայրերի վերաբերյալ՝ ըստ ՄԿԾ-ների	3
12.	Վերանայված ուսանողների ուսումնառության գնահատման և բողոքարկման կանոնակարգ։	3
13.	Պրակտիկաների ծրագրեր, օրագրեր, գնահատման չափանիշներ։	3
14.	Դպրոցներ այցելու ժամանակցույց	4
15.	ՈւԽ ամբողջական կազմ, աշխատանքային պլաններ, հաշվետվություններ /վերջին 3 տարվա/	4
16.	Շրջանավարտների բազա՝ ըստ մասնագիտությունների /վերջին 5 տարիների/, վերլուծություններ	4
17.	Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների ժամանակացույց	4
18.	Ըստ ՄԿԾ-ների լիցենզիոն տեղերը և ուսանողների քանակը	4
19.	Դասախոսի մրցույթի հարցաշար, արձանագրություն, Մրցութային կարգով ընդունված դասախոսական թվաքանակ	5
20.	Դասախոսական կազմի և ուսումնաօժանդակ կազմի քանակ, ներքին համատեղողների քանակ	5
21.	Գործատու, պրակտիկ ոլորտից ներգրավված դասախոսների քանակ	5
22.	Փաստաթուղթ դասալսումների անցկացման, դրանց արդյունքների վերլուծման , եզրակացությունների վերաբերյալ	5
23.	Մասնագիտական և մեթոդական վերապատրաստված դասախոսական կազմի տվյալներ վերջին հինգ տարվա համար՝ նշելով նաև վերապատրաստող	5

	կազմակերպությունը, թեման, ժամանակահատվաը, դասախոսական կազմի անուն-ազգանունը, դասավանդող մոդուլները, առարկանները	
24.	Դասալսումների արձանագրություններ, վերլուծություններ	5
25.	Դասախոսական կազմի կողմից տպագրված հոդվածներ (ներառյալ «ՄՈՒՀ-ի շրջանավարտների մրցունակության վրա ազդող գործոնները» հոդվածը), ձեռնարակներ, մեթոդական ուղեցույցներ և այլ հետազոտական աշխատանքներ	6
26.	Ինքնագնահատման թերթիկ, նախանական գնահատման թերթիկ	6
27.	Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների քանակը և խնդրի բնույթը	7
28.	Գործատուների ցանկ, որոնց հետ համագործակցում է քոլեջը	9
29.	Այլ ՄՈՒՀ-երի հետ եղած հուշագրեր և պայմանագրեր, գործընկեր կազմակերպությունների ցանկ	9
30.	Շահակիցների բավարարվածության հարցումներ, վերլուծություններ	10
31.	ՈԱ աշխատանքային պլաններ Հաշվետվություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

2. Մասնագիտական կաբինետներ
3. Դահլիճ
4. Գրադարան
5. Դահլիճ
6. Ուսումնական հրապարակներ
7. Վարչական սենյակներ
8. Լսարաններ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ԱՊՀ - Անկախ պետությունների համագործակցություն
2. ԳՊՏՔ-Գյումրու պետական տեխնիկական քոլեջ
3. ԿԳՄՍ -Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
4. ՀԿ- Հասարակական կազմակերպություն
5. ՀՀ- Հայաստանի Հանրապետություն
6. ՄԿԾ- Մասնագիտական կրթական ծրագիր
7. ՀԿԵ- Հարավկովկասյան երկաթուղի
8. ՄԿԾ- Մասնագիտական կրթական ծրագրեր
9. ՄԿՈՒ- Մասնագիտական կրթություն և ուսուցում
10. ՄՈՒՀ -Մասնագիտական ուսումնական հաստատություն
11. ՄԿՈՒԶԱԿ- Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն

12. ՊԿՉ -Պետական կրթական չափորոշիչ

13. .ՊԻԳԲ -Պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում

14. . ՊՈԱԿ - Պետական ոչ առևտրային կազմակերպություն

15. ՊՈՀ - Պետական որակավորող հանձնաժողով

16. ՌԴ- Ռուսաստանի Դաշնություն

17. ՌԾ- Ռազմավարական ծրագիր

18. ՈԱԱԿ -Որակի ապահովման ազգային կենտրոն

19. ՈԱ- Որակի ապահովում

20. ՈԻԽ- Ուսանողական խորհուրդ

21. ՓԲԸ -Փակ բաժնետիրական ընկերություն